

*ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ*

*Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը*

*2010թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԻ*

*ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ*

## Մեծարգո վարչապետ

2010 թվականը Գեղարքունիքի մարզի կենսագործունեության և տնտեսության համար կարելի է համարել որոշակի հաջողությունների և ձեռքբերումների, առաջընթացի և վերելքի տարի, քանի որ նկատելի դրական տեղաշարժ ապահովվեց բնակչության եկամուտների աճի, սոցիալական քաղաքականության և կենսական նշանակության ծրագրերի իրականացման, արտաքին տնտեսական կապերի հաստատման ու ամրապնդման, տեղական բյուջեների կատարման, կրթական և առողջապահական բարեփոխումների շարունակման, ենթակառուցվածքների և զբոսաշրջության զարգացման, բնապահպանության, պաշտպանության, գյուղատնտեսության, կապիտալ շինարարության, ճանապարհաշինության և այլ ուղղություններում:

Մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների կանոնակարգված ու համագործակցված աշխատանքների և կատարողական կարգապահության բարձրացման շնորհիվ ոչ միայն մեզ հաջողվեց նախորդ տարվա համեմատ 6.2 տոկոս աճ արձանագրել տեղական բյուջեների կատարման ուղղությամբ և նկատելիորեն մարել նախորդ տարիներին կուտակված աշխատավարձերի և սոցվճարների պարտքերը, այլ նաև միջոցներ ուղղել սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացմանը: Այս լուրջ ձեռքբերումը մեզ հիմք է տալիս ավելի առաջ նայելու, նոր եռանդով ու ոգևորությամբ աշխատելու, կուտակված հիմնահարցերին կանոնակարգված և հստակ լուծում տալու համար:

Ըստ առանձին բնագավառների կատարված աշխատանքների պատկերը հետևյալն է.

### **ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

ՀՀ Տարածքային կառավարման և ՀՀ ֆինանսների նախարարությունների կողմից սահմանված կարգով ու ժամկետներում մշակվել են մարզային ենթակայության բյուջետային կազմակերպությունների 2012-2014թթ. պահպանման ծախսերի նախագծերը, բյուջետային հայտերի տեսքով խմբավորվել և ներկայացվել են ՀՀ կառավարություն ու համապատասխան նախարարություններ, մասնավորապես ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն:

ՀՀ կառավարության 2009թ. դեկտեմբերի 24-ի թիվ 1522-Ն որոշման 16-րդ կետի սահմանված ժամկետում ներկայացվել է հանրակրթական դպրոցների աշակերտների թվի /տարբերակված հարթավայրային, լեռնային և բարձր լեռնային, միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների, ավագ դպրոցների, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների և նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների/ հաշվետու տարվա ճշտված ծախսերի անհատական և ամփոփ նախահաշիվները ցանցային ցուցանիշներով:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված մեթոդական ցուցումների համաձայն /ներառյալ ծրագրային բյուջետավորման ձևաչափերի/ կազմվել են բյուջետային հայտերը և ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ապահովվել է մարզպետարանի մասնակցությունը մարզային ենթակայության բյուջետային կազմակերպությունների 2010թ. պահպանման ծախսերի նախահաշիվների կազմման, տնտեսագիտական դասակարգման հոդվածների փոփոխությունների կատարման, ինչպես նաև գանձապետական բաժանմունք-բյուջետային կազմակերպություն հարաբերությունների կարգավորմանը:

2010թ. բազմիցս մարզպետարանում և տարածաշրջաններում կազմակերպվել են սեմինար-խորհրդակցություններ, տրվել են պարզաբանումներ և մեթոդական օգնություն պետական բյուջեից տրվող միջոցների նախատեսման, նպատակային օգտագործման, ֆինանսական կարգապահության պահպանման հարցերի պարզաբանման վերաբերյալ:

Տրվել են մեթոդական ցուցումներ համայնքների 2010 – 2011թ.թ. բյուջեի կազմման ուղղությամբ: Ժամանակին ապահովվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից համայնքների գործունեությանը վերաբերվող հրահանգչական նյութերի, ցուցումների և նորմատիվ ակտերի բազմացումը և համայնքներին տրամադրումը:

Ընտրանքային կարգով բյուջետային կազմակերպություններում կազմակերպվել են ուսումնասիրություններ ֆինանսական կարգապահության պահպանման և պետական բյուջեից հատկացված միջոցների նպատակային ծախսումների ուղղությամբ:

2010 թ.-ին ՀՀ Պետական բյուջեից կրթության բնագավառում մարզին հատկացված 6495006.6 հազ. դրամը, մշակույթի բնագավառում հատկացված 49094.0 հազ. դրամը, ՀՀ Կառավարության 2010 թ.-ի հունիսի 3-ի թիվ 670-Ն որոշմամբ /Սևանի պոլիկլինիկա ՓԲԸ շենքի հիմնանորոգման նպատակով/ հատկացված 9327,4 հազ. դրամը ամբողջությամբ ծախսվել է: Մարզպետարանի աշխատակազմի պահպանման ծախսերի համար հատկացված 373492.4 հազ. դրամից ծախսվել է 373297.1 հազ. դրամը կամ` 99.9օ/օ-ը, կապիտալ ներդրումների համար նախատեսված 197695.0 հազ. դրամից ծախսվել է 196090.5 հազ. դրամը կամ` 99.1 օ/օ-ը, ճանապարհների պահպանության համար նախատեսված 93906.0 հազ. դրամից ծախսվել է 86870.0 հազ. դրամը կամ` 92.5 %-ը:

ՀՀ Տարածքային կառավարման նախարարության կողմից սահմանված կարգով ու ժամկետներում կազմակերպվել է մարզի 91 համայնքների գույքահարկի և հողի հարկի գծով ելակետային տվյալների, համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող` ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների հաշվարկման հիմքում դրվող ելակետային տվյալների հավաքագրման, ամփոփման, ճշգրտման և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ներկայացման աշխատանքները:

Մարզի 91 համայնքների բյուջեների 2010 թ. տարեկան եկամտային մասը կազմում է 4022262.7 հազ.դրամ, ծախսային մասը` 4846587.7 հազ.դրամ: 2010թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ համայնքների բյուջեների եկամուտները կատարվել են 3978300.9 հազ.դրամ, կամ 98.9 օ/օ:

Մարզի բոլոր համայնքների 2010թ. 12 ամսվա համահարթեցման դոտացիաները ստացել են 100 տոկոսով:

Համայնքների 2010թ. բյուջեների տարեկան սեփական եկամուտները կատարվել են 96.6 օ/օ-ով, կամ պլանով նախատեսված 1047968.5 հազ.դրամի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 1012450.5 հազ.դրամ:

ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա տրամադրելու նպատակով մարզի տարածքում տեղաբաշխված համայնքներից հավաքագրվել են համապատասխան հայտեր ամփոփվել և ժամանակին ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն:

Սահմանված կարգով և ժամկետներում հավաքագրվել, ստուգվել, ամփոփվել և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ու ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացվել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի, նրա ենթակա կազմակերպությունների մարզի համայնքների ամսական, եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, համայնքներում նախորդ տարիներից կուտակած աշխատավարձի գծով պարտքերի հաշվետվությունները: Մարզի համայնքներում անցկացվել են խորհրդակցություններ և ցուցաբերվել մեթոդական ու խորհրդատվական օգնություն հաշվապահական հաշվառման վարման կարգի, ինչպես նաև հնարավոր փոփոխությունների ու լրացումների մասին:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պահանջվող ժամկետին կազմվել է մարզպետարանի և նրա ենթակայության կազմակերպությունների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման տեխնիկական բնութագրերը՝ համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված չափորոշիչների և այն հաստատվելուց հետո ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն: ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել մարզպետարանի կարիքների համար գնվող ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների անվանացանկը ՀՀ 2010թ. պետական բյուջեի համամասնություններում գետեղելու համար:

2010թ. բյուջեի համամասնությունները հաստատվելուց հետո կազմվել են գնման և վճարման ժամանակացույցեր, որոնք ՏԳԲ-ի կողմից հաստատվելուց հետո դարձել են գնման փաթեթներ: Մարզպետարանի և ենթակա կազմակերպությունների կարիքների համար գնումները կատարվել են „Գնումների մասին„ ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2008թ հունիսի 5-ի թիվ 853-Ն և 2009թ դեկտեմբերի 17-ի ՀՀ կառավարության թիվ 1521-Ն որոշումների պահանջներից ելնելով: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2006թ.-ի ապրիլի 26-ի թիվ 426-Ն հրամանի ՊՈԱԿ-ների համար գնումները կատարվել են մեկ անձից: Մարզի 129 ՊՈԱԿ-ների համար ըստ կրթական ծրագրերի կազմվել են գնման փաթեթները՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանված օրինակելի ձևի և ներկայացվել լիազոր մարմին դրական եզրակացություն ստանալու համար: Գնման փաթեթ է ներկայացվել նաև մարզի արվեստի և երաժշտական դպրոցներում ազգային նվագարանների գծով ՀՀ կառավարության 2009թ. ապրիլի 16-ի թիվ 529-Ն որոշմամբ հաստատված գումարների համար:

Մարզպետարանի կողմից ՊՈԱԿ-ների կարիքների համար կազմակերպվող գնման գործընթացի շրջանակներում պարբերաբար անցկացվել են սեմինար խորհրդակցություններ, տրվել են համապատասխան պարզաբանումներ: Գործընթացի շրջանակներում բողոքներ չեն եղել և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով քննարկում և որոշումների կայացում չի եղել:

Մեթոդական ցուցումներ են տրվել մարզային ենթակայության կազմակերպություններին՝ գնումների գործընթացը գործող օրենքով կազմակերպելու նպատակով:

Որոշ համայնքներում կատարվել են ուսումնասիրություններ և տրվել են մեթոդական ցուցումներ գնումների գործընթացը օրենքի պահանջներով կազմակերպելու համար:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի 2010թ. ծրագիրը հաստատվել է գլխավոր ֆինանսիստի կողմից 10.11.2009թ. և համաձայնեցվել է ՀՀ ֆինանսների նախարարության հետ: Համաձայն ծրագրի 2010 թվականին նախատեսվել է անցկացնել աուդիտ 44 կազմակերպություններում: Ծրագրով նախատեսված աուդիտները սահմանված ժամկետներում կատարվել են:

Աուդիտորական աշխատանքները իրականացնելու նպատակով մարզպետի կարգադրությամբ ստեղծվել է աուդիտորական խումբ, որը համալրվել է ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության աշխատակիցներով:

Իրականացված աուդիտների ընթացքում ստուգվել են կազմակերպությունների գործունեության տարբեր ոլորտները, այդ թվում հիմնադիր փաստաթղթերը և գործունեության

ուղորտը, կազմակերպության եկամուտները և ծախսերը, դրամական գործառնությունները, հիմնական և շրջանառու միջոցների հաշվառումը, հաշվապահական հաշվառման դրվածքը և այլն:

2010թ. Մարզպետարանի պահպանման մարզային ենթակայության բյուջետային հիմնարկների և համայնքներին հատկացված սուբվենցիաների ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշները

Աղյուսակ 1

h/h	Անվանումը	2010թ. տարեկան պլանը	փաստացի կատարողական առ 31.12.2010թ. դրությամբ	կատարման օ/օ-ը
1.	Կրթություն	6496660.2	6495006.6	99.9
2.	Մշակույթ	49094.0	49094.0	100
3.	Մարզպետարանի աշխատակազմ	373492.4	373297.1	99,9
4.	Կապ. ներդրումներ`	197695.0	196090.5	99.1
5.	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	9327.4	9327.4	100.0
6.	Ճանապարհային տնտեսություն	93906,0	86870,0	92,5

Մարզի համայնքների սեփական և ընդամենը եկամուտների կատարողականը առ. 31.12.2010 թ. դրությամբ

Աղյուսակ 2

Հ/հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ընդ. սեփական եկամուտներ		օ/օ	ընդ. եկամուտներ		օ/օ
		պլան հազ. դրամ	փաստացի հազ. դրամ		պլան հազ. դրամ	փաստացի հազ. դրամ	
1.	Գավառի տարածք	225183.2	211590.2	94	909133.1	894018.2	98.3
2.	Սևանի տարածք	208752.5	187984.1	90.1	702138.4	680722	96.9
3.	Ճամբարակի տարածք	79434.0	68674.7	86.5	278221.7	266609.5	95.8
4.	Մարտունու տարածք	293381.0	291951.9	99.5	1371730.7	1367550.0	99.7
5.	Վարդենիսի տարածք	241217.8	252249.6	104.6	761038.8	769401.2	101.1
	ԸՆԴԱՄԵՆԸ	1047968.5	1012450.5	96.6	4022262.7	3978300.9	98.9

--	--	--	--	--	--	--

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2010Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ,  
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

2010թ-ին ՀՀ Գեղարքունիքի մարզում միջազգային կազմակերպությունների գործունեությունը նպատակաուղղված է եղել մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանը և նրանց իրագործմանը: ՀՀ կառավարության 2009թ.մայիսի 7-ի N505-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի 2009-2011թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, որը հաղիսանում է մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի բնութագրման և վերլուծության հիմնական իրավական փաստաթուղթը:

Աշխատանքներ են տարվել միջազգային դոնոր կազմակերպությունների հետ մարզի համայնքների առավել կենսական ծրագրերի առաջնահերթ իրականացման նպատակով:

-„Վորլդ Վիժն Հայաստան,, Գավառի և Վարդենիսի Տարածքային Զարգացման Ծրագիրը 2010 թվականին մարզում իրականացրել է գյուղատնտեսական, կրթական, համայնքային զարգացման ոլորտների միջոցառումները:

-„Հազարամյակի մարտահրավերներ,, ծրագրի շրջանակներում իրականացվել են միջտնտեսային ջրանցքների հիմնական նորոգում և երրորդ կարգի ջրանցքների վերանորոգման աշխատանքներ և ծախսվել է 2010 թվականի ընթացքում շուրջ` 1,424.8մլն.դրամ նշված աշխատանքների իրականացնելու նպատակով:

Կառուցվել է Աստղաձորի ամբուլատորիան` 53.0մլն.դրամ, հիմնանորոգվել է Սարուխանի ամբուլատորիան` 45.0մլն.դրամ և Գավառի բժշկական կենտրոնը` 203.1մլն.դրամ:

-„Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի,, միջոցների հաշվին 2010 թ-ի ընթացքում մարզում իրականացվել են հետևյալ ծրագրերը` Գեղհովիտի մանկապարտեզի վերանորոգում` 75,0մլն.դրամ, Սևանի պոլիկլինիկայի հիմնանորոգում` 90,0մլն.դրամ:

Ֆրանսիայի ԱՄԴ կազմակերպության կողմից վերանորոգվել են Սևանի հիվանդանոցը` 27.0մլն.դրամ և Գավառի պոլիկլինիկան` 3,5մլն.դրամ:

-„Արեգակ,, ՈԻՎԿ ՓԲԸ գործում է մարզի 5 տարածաշրջաններում և բնակչությանը մատուցում է ֆինանսական բարձրակարգ ու հասանելի ծառայություններ: Մարզի 5 տարածաշրջանների բնակիչների տրամադրվել են վարկեր մանր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար:

„Արեգակ,, ՈԻՎԿ-ը տարածաշրջանի շատ համայնքների հետ գործընկերային հարաբերություններ են ձևավորվել:

-„Գյուղական Տարածքների Տնտեսական Զարգացման Ծրագրի,, /ԻՖԱԴ/ շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի մարզում իրականացվել են շուրջ` 82.0 մլն.դրամի ծրագիր` գետերի հունների, հեղեղատարի մաքրման աշխատանքներ և հիմնանորոգվել է Ճամբարակի Գարեգին Նժդեհի փողոցի 1,2 կմ հատվածը, որի համար ծախսվել է 117.1 մլն.դրամ:

-ՀՀ Գեղարքունիքի մարզի և Ֆրանսիայի Իզերի շրջանի Ընդհանուր խորհրդի միջև կնքվել է փոխշահավետ հարաբերություններ զարգացնելու պայմանագիր, որը նպաստելու է երկու տարածքների հարաբերությունների զարգացմանը, Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանն ու փորձի փոխանակման խթանմանը, մասնավորապես ընդգրկվել են առողջապահության, գյուղական տուրիզմի, գյուղատնտեսության, ֆրանսերենի ուսուցման ոլորտները:

Հայ-ֆրանսիական բարեկամությունը տարեց-տարի ավելի է սերտանում: Պայմանագրի համաձայն ավելի հաճախակի են դարձել փոխադարձ այցելություններն ու մարզում տարաբնույթ նախագծերի կյանքի կոչելու գործընթացները:

Արդեն 3-րդ տարին է Գեղարքունիքի մարզի Վարդենիսի, Գավառի և Սևանի տարածաշրջաններում իրականացվում է ֆրանսերենի ուսուցում, յուրաքանչյուր տարի դասընթացների համար նախատեսվում է 9 շաբաթ: Դասընթացները հովանավորում է Իգերի դեպարտամենտի գլխավոր խորհուրդը, իսկ իրականացումը կատարում է „Ֆրանս-ֆորմասիոն ինտերնասիոնալ“, կազմակերպությունը: Այդ դասընթացներին հաճախել են մարզի ավելի քան 200 տարբեր տարիքի անձինք:

Իգերի մարզի „ԱՄԴ ԱԵՄ բժշկական օգնության և զարգացման“, կազմակերպության համագործակցության շրջանակներում 2010 թ-ին վերանորոգվել է Գավառի պոլիկլինիկան և Սևանի հիվանդանոցը:

- ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան և Ֆրանսիայի Իգերի շրջանի Գրենոբլ քաղաքների միջև կնքվել է քույր քաղաքների համագործակցության համաձայնագիր: Համագործակցությունը ընթանում է 3 ուղղություններով՝ տուրիզմի զարգացում /ներառյալ գյուղական տուրիզմ/, առողջապահություն և ֆրանկոֆոնիա /ֆրանսերեն լեզվի տարածում/:

- ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս և Ֆրանսիայի Իգերի շրջանի Ռոման քաղաքների միջև կնքվել է քույր քաղաքների համագործակցության համաձայնագիր:

Համագործակցությունը ընթանում է 3 ուղղություններով՝ տուրիզմի զարգացում /ներառյալ գյուղական տուրիզմ/, առողջապահություն, ֆրանկոֆոնիա /ֆրանսերեն լեզվի տարածում/: Համագործակցությունը ընթանում է հիմնականում գյուղական տուրիզմը զարգացման ոլորտում:

ՌԴ Կրասնոդարի երկրամասի Նովոռոսիյսկ քաղաքում համագործակցության հուշագիր է ստորագրվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ և ՌԴ Կրասնոդարի երկրամասի Նովոռոսիյսկ քաղաքների միջև:

Համագործակցության հուշագրի շրջանակներում իրականացվել է Նովոռոսիյսկի պատվիրակության այց ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաք: Հուշագրի շրջանակներում նախատեսվում է շուրջ 150 աշխատատեղերի խնդիր լուծել Գավառում, արտադրական ձեռնարկություն հիմնելու արդյունքում:

Համագործակցության նպատակն է հաստատել փոխադարձ եղբայրական կապեր և զարգացնել առևտրատնտեսական, մշակութային և զբոսաշրջության ոլորտները:

- Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի վարչակազմի և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի միջև առևտրատնտեսական և մշակութային համագործակցության հուշագիր է կնքվել:

Համագործակցությունը հնարավորություն է ընձեռել տնտեսավարող սուբյեկտների ուղղակի շփումներին և տնտեսական գործունեությանը, նպաստել է գյուղատնտեսության, առևտրի, մանր ու միջին ձեռնարկատիրության առանձին կառույցների միջև փոխադարձ կապերի զարգացմանը:

- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և Ավստրիայի Հանրապետության „Վիեննա կոնսորցիումի“, կազմակերպության միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր: Համագործակցության նպատակն է Գեղարքունիքի մարզում իրականացնելու ենթակառուցվածքների և արդյունաբերության զարգացումը:

- Կնքված փոխըմբռնման հուշագրի համաձայն, կողմերը Գեղարքունիքի մարզում պետք է իրականացնեն ենթակառուցվածքների և արդյունաբերության տարբեր ճյուղերի զարգացում:

- ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ և Իտալիայի Հանրապետության Պրիվերնո քաղաքների միջև բարեկամության և համագործակցության համաձայնագիր է կնքվել: Համագործակցության նպատակն է պահպանել եղբայրության ընդհանուր փոխհարաբերությունները, միասնական և եղբայրական բարեկամությունը ուժեղացնող փոխադարձ ըմբռնումը՝ երկու համայնքների

առաջխաղացման, զարգացման և բարեկեցության համար, իրանելու կրթության, սոցիալական, մշակութային, տուրիզմի ոլորտների, տնտեսական և առևտրային հարաբերությունների զարգացումը:

Ներկայումս ՀՀ Գեղարքունիքի մարզում գործում են 84 արտադրական ձեռնարկություններ: Խոշոր արտադրական ձեռնարկություններից մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն „Սոթքի ոսկու հանքը,, , “Գոլդեն Լենս,, ՍՊԸ-ն , „Սևանի հացի գործարան,, ՍՊԸ-ն, „Վարդենիսի քարհանքի վարչություն,, ԲԲԸ, „Կատարողական սարքերի գործարան,, ԲԲԸ և այլն:

Մարզում մանրածախ առևտրի շրջանառությունը 2010թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին կազմել է 6900.5 մլն. դրամ, այդ թվում՝ խանութների շրջանառությունը՝ 2486.7 մլն. դրամ, սպառողական ապրանքների շուկաների շրջանառությունը՝ 1023.1 մլն. դրամ, գյուղատնտեսական շուկաների շրջանառությունը՝ 278.1 մլն. դրամ, կրպակների շրջանառությունը՝ 269,1 մլն. դրամ և առևտրի այլ օբյեկտների շրջանառությունը՝ 2843.6 մլն. դրամ:

ՀՀ Գեղարքունիքի մարզում գործում են 474 առևտրային ձեռնարկություններ, այդ թվում 2 սպառողական ապրանքների և 2 գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ: Մարզում սպառողական շուկան կայուն է և ապրանքաշրջանառության ծավալը 2010 թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին կազմել է 6 մլրդ 900.5 մլն դրամ, որն իրականացվել է 474 առևտրային կազմակերպությունների միջոցով, նախորդ տարվա 463-ի փոխարեն: Մարզում սեզոնային շուրջ 520 նոր աշխատատեղ է բացվել շինարարության և սեզոնային առևտրի բնագավառում:

ՀՀ Գեղարքունիքի մարզում արդյունաբերական ձեռնարկությունները ընթացիկ գներով թողարկել են 8, 622.4 մլն.դրամի հասնող արդյունաբերական արտադրանք, իրացվել է 6, 768.7 մլն.դրամի արտադրանք: Թողարկված արտադրանքը իրացվել է ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ ԱՊՀ երկրներում:

2010թ. արտադրած որոշակի արտադրատեսակների գծով գերազանցվել է 2009թ. արտադրության մակարդակը:

Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի հետ համեմատած մարզի ՀՆԱ-ն՝ /արդյունաբերություն գումարած շինարարություն/ կազմում է 105,2%, իսկ արդյունաբերությունը առանց շինարարության կազմում է 109,9%, որը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

2009-11թթ.Մարզի Զարգացման Ծրագրի 2010թվականի Տարեկան Աշխատանքային Պլանով բոլոր ոլորտների համար նախատեսված էր 10,702.0 մլն.դրամի աշխատանքներ: Սակայն փաստացի իրականացվել է 10,767.208մլն.դրամի աշխատանքներ, որը 65 208 մլն.դրամով գերազանցել է պլանավորվածին:

2009-11թթ.Մարզի Զարգացման Ծրագրի 2010 թվականի նախատեսված աշխատանքները՝ ըստ պլանի կազմում է 100.6%: Վերլուծության աղյուսակը կցվում է:

### **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2010 թվականին հասավ 94.8 միլիարդ դրամի: Արտադրվեց 108.8 հազար տոննա հացահատիկ, 239.4 հազար տոննա կարտոֆիլ, 51.6 հազար տոննա բանջարեղեն, 22000 տոննա միս, 123.7 հազար տոննա կաթ և 71.0 միլիոն ձու: Չնայած



գարնան և ամռան ամիսների անբարենպաստ եղանակներին, մարզի գյուղացիական, գյուղացիական կուլեկտիվ տնտեսությունները ընդհուպ մոտեցան 2009 թվականի ցուցանիշներին:

ՀՀ կառավարության կողմից իրականացված սերմարտադրության ծրագրի համաձայն, 2011-2014 թվականներին ցորենի արտադրության ավելացման նպատակով Ռուսաստանի Դաշնությունից ներկրվեց 300 տոննա էլիտար սերմ, կատարվեց ավելի քան 1000 հեկտար աշնանացան: Համայնքներին հատկացվեց շուրջ 2.0 տոննա ցինկի ֆոսֆիդ մկնանման կրծողների դեմ պայքարի նպատակով:

Հազարամյակի մարտահրավերներ ծրագրով, միջտնտեսային ջրանցքների հիմնական նորոգման և 3-րդ կարգի ջրանցքների վերանորոգման համար ներդրվեց 1.4 միլիարդ դրամ, գետերի հունի, հեղեղատարների մաքրման նպատակով համայնքներում իրականացվեց 82.0 մլն.դրամի հասնող աշխատանքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետարանը ուշադրություն է դարձրել անասնաբուժական միջոցառումների իրականացմանը: Հակահամաճարակային պրեպարատները ներկրելու շնորհիվ պատվաստվել է համայնքներում առկա անասունների ողջ գլխաքանակը, այդ նպատակով պետությունը համայնքներին է հատկացրել 103.0 մլն.դրամի չափով բուժանյութեր:

Տարվա սկզբներին ճամբարակի տարածաշրջանում բռնկվեց „Խոզերի ժանտախտ,, հիվանդությունը: Մարզպետարանը ճամբարակի տարածաշրջանը հայտարարեց կարանտին գոտի, մարզի անասնաբուժական ծառայությունը ձեռնարկեց բոլոր անհրաժեշտ միջոցները այդ վարակիչ հիվանդությունը կանխելու, քաղաքացիներին պատճառված վնասները նվազագույնի հասցնելու համար:

Համայնքային հանձնաժողովները ժամանակին կազմել են մասնագիտական ակտեր և մարզպետարանի միջոցով ներկայացրել ՀՀ գյուղատնտեսության նախարարություն խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով քաղաքացիներին օժանդակություն ցուցաբերելու համար:

Ինչպես 2009, այնպես էլ 2010 թվականին մեր մարզից զգալի քանակությամբ մանր եղջերավոր անասուններ վաճառվեցին բավական բարձր գներով: Դա հնարավորություն է ընձեռնել մեր մարզի ոչխարաբույծներին դրսից ներկրել բարձր մթերատու ցեղեր և ցեղախմբեր: Համարվելով ցածր աշխատատար ճյուղ, ոչխարաբուծության զարգացման շնորհիվ մեր մարզում արդյունավետ կօգտագործվեն հեռագնա արոտավայրերը: Իսկ դա էլ իր հերթին զգալի ներդրումներ է պահանջում էլեկտրահաղորդագծերի կառուցման և ջրամատակարարման համար:

Գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման սեզոնում լուրջ ուշադրություն է դարձվել ջրտուքին, ջրաբաշխման աշխատանքների կազմակերպմանը, Վարդենիսի, Գավառի և Մարտունու ՋՕԸ-երը համայնքներին հատկացրին 4.83 մլն. խորանարդ մետր ոռոգման ջուր և ոռոգման վարձավճարների գանձումները կատարեցին շուրջ 900/0-ով, գանձումները ամբողջությամբ կկատարվեն 2011թ. առաջին եռամսյակում:

Որպես բուսաբուծության ինտենսիվացման կարևոր պայման, մարզում լուրջ ուշադրություն է դարձվում ոռոգելի տարածությունների ընդարձակմանը: Մեծ Մասրիկի ինքնահոս համակարգի կառուցումը մոտենում է ավարտին, որով Վարդենիս քաղաքում, Շատջրեք, Շատվան, Մեծ Մասրիկ համայնքներում ընդհանուր առմամբ ոռոգելի տարածությունները ընդարձակվեցին շուրջ 2000 հեկտարով /այդ նպատակի համար այս տարի ներդրվեց 350 մլն.դրամ/: Ք.Մարտունի և Զոլաքար համայնքներում պոմպակայանի և ինքնահոս համակարգի կառուցման շնորհիվ ոռոգելի տարածությունները Մարտունի տարածաշրջանում ավելացան 135 հեկտարով:

Հանրապետության գործադիր մարմինների առջև հարց է բարձրացվել 2011թ. Գավառագետի և մարզի մի շարք գետերի հունը մաքրելու համար անհրաժեշտ ֆինանսավորում իրականացնելու համար:

Մարզում արվել է ամեն հնարավոր բան 2011 թվականին գյուղատնտեսության ոլորտում լավագույն արդյունքների հասնելու համար:

Մարզպետի 17.06.2010թ. թիվ 46-Ա կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրություններ են անցկացվել Սևանա լճի ափամերձ հատվածներում և մայրուղիների վրա տեղակայված առևտրի, հասարակական սննդի ու սպասարկման ոլորտի օբյեկտներում, պատմամշակութային վայրերում և բժշկական հաստատություններում բնապահպանական օրենսդրության ապահովման, ջրամատակարարման ու ջրահեռացման աշխատանքների կազմակերպման, տարածքների սանիտարական մաքրման, հակահրդեհային անվտանգության ընդհանուր կանոնների պահպանության և այլ հարցերի վերաբերյալ: Ուսումնասիրությունների արդյունքում կազմվել են արձանագրություններ ու զեկույցներ :

Ղեկավարվելով ՀՀ Նախագահի 1997թ. մայիսի 6-ի հրամանագրի դրույթներով և ի կատարումն ՀՀ փոխվարչապետի 26.10.2010թ. թիվ 01/17/6137-10 հանձնարարականի համագործակցված աշխատանք է տարվել մարզային ոստիկանության հետ կանխարգելիչ աշխատանքներ տանելու համայնքների հետ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների եզրերին և հարող տարածքներում ապօրինի աղբաթափումների վերաբերյալ:

Մարզի ջրահավաք ավազաններում և գերխոնավ տարածքներում ջրային ռեսուրսների վրա ազդեցության գնահատման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով „Սևան,, ԱՊ-ի, ՀՀ բնապահպանության նախարարության , ՀՀ ԳԱԱ հիդրոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի գիտաշխատողների և բնապահպանության մարզային տեսչության աշխատակիցների հետ Ձկնագետ, Գավառագետ, Արգիճի, Լիճք, Մարտունի, Վարդենիկ, Մասրիկ, Կարճաղբյուր գետերի տարբեր հատվածներում /ակունք, միջնամաս, գետաբերան/ պարբերաբար կատարվել են համատեղ ուսումնասիրություններ: ԶՕԸ-երի հետ հսկել և կարգավորել ենք ջրօգտագործման վիճակը, հետևել Սևանա լճից Սևան – Հրազդան իռիգացիոն ջրանցքից, գետերից, խորքային հորերից սահմանված կարգով ջրառի բացթողնման աշխատանքներին: Սևանա լճից ռոռզման նպատակով բաց է թողնվել 156.44մլն/խմ ջուր, լճի մակարդակը բարձրացել է 47 սմ-ով:

Մարզի հինգ խոշոր քաղաքներում ավարտին են մոտենում Սևանի հիմնահարցերի հանձնաժողովի 2010թ. գործունեության ծրագրում ներառված ջրամատակարարման, ջրահեռացման ու մաքրման կայանների կառուցման աշխատանքները:

Աշխատանքներ են տարվում օգտակար հանածոների հանքավայրերի, արտադրական ձեռնարկությունների և արտադրամասերի կողմից թափոնների գործածության աշխատանքային ծրագրերի կազմման ուղղությամբ: Պարբերաբար կատարվել են ուսումնասիրություններ՝ բնապահպանական օրենսդրության կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու վերաբերյալ և հայտնաբերված խախտումների մասին սահմանված ժամկետում տեղյակ է պահվել մարզային բնապահպանական տեսչությանը:

Մարզի մի շարք համայնքներում ստեղծվել են կոմունալ ծառայություններ իրականացնող կազմակերպություններ, որոնց միջոցով կատարվում են աղբահանության աշխատանքներ:

Տարվա ընթացքում, յուրաքանչյուր ամիսը 2 անգամ, մեր ուժերով և ամիսը մեկ անգամ տեսչության աշխատակիցների հետ համատեղ կազմակերպել ենք ստուգայցեր և ուսումնասիրություններ՝ ապօրինի ծառահատումների, ընդերքօգտագործման, ձկնորսության, հատուկ պահպանվող տարածքների պահպանության, վտանգավոր արտանետումների կանխարգելման նվազեցման ուղղությամբ: Այդ մասին կազմվել են համապատասխան արձանագրություններ:

**ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Մարզի հողային հաշվեկշռում առկա է 534916 հազ.հա հողատարածք, որից 348264հա՝ գյուղատնտեսական նշանակության: Գյուղատնտեսական նշանակության հողերից 210655 հեկտարը գտնվում է համայնքների վարչական սահմաններում /այդ թվում 76565.7 հա վարելահող, 19886.8 հա խոտհարք, 83062.3 հա արոտ և 31185.2 հա այլ հողեր/, իսկ 137609.0 հա-ը՝ համայնքների վարչական սահմաններից դուրս /այդ թվում 4400.7 հա վարելահող, 18091.0 հա խոտհարք, 94498.4 հա արոտ և 20618.9 հա այլ հողեր/, որոնք 2010թ. հուլիսից ընդգրկվել են համայնքների վարչական սահմաններում:

2010թ.-ին մարզի համայնքների ղեկավարների կողմից վարձակալության են տրամադրվել 40.1 հազ. հա համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողամասեր: 2011թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված 150.8մլն. դրամ վարձավճարի դիմաց գանձվել և մուտքագրվել է 135.8 մլն. դրամ վարձավճար: Դեռևս անբավարար է օգտագործվող հողատեսքերի և հատկապես արոտավայրերի վարձակալության պետական գրանցումը և վարձավճարների գանձումը:

Հողաշինարարության և հողօգտագործման բաժնի-/մարզային հողային պետական տեսչության/ ստուգումների անցկացման տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն մարզի 26 համայնքներում կատարվել են ուսումնասիրություններ պետական և համայնքային սեփականության հողամասերի օգտագործման տրամադրելու, հետ վերցնելու, հողամասերի վարձավճարների և հարկերի գանձման, հողերի պահպանության միջոցառումների իրականացման ուղղությամբ:

Ուսումնասիրությունների ընթացքում համայնքներում արձանագրվել են հիմնականում հետևյալ խախտումներն ու թերությունները՝

Մրցույթները անցկացվում են ՀՀ հողային օրենսգրքի 78-րդ հոդվածի պահանջների խախտումներով՝ սահմանված ժամկետներում չեն ընդունվում հայտերը, սահմանված կարգով չեն կազմվում արձանագրությունները, պայմանագրերը և հատկագծերը, որոնցով էլ պայմանավորված չի ապահովվում պայմանագրերի նոտարական վավերացումը և պետական գրանցումը:

Վերոհիշյալ խախտումների հետևանքով հողերը օգտագործվում են ցածր արդյունավետությամբ, սահմանված ժամկետներում չեն գանձվում վարձավճարները:

Հողային հարաբերությունների բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության վերաբերյալ բաժնի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվել են մարզխորհրդի և մարզպետի քննարկմանը: Համապատասխան որոշումներում ու արձանագրություններում՝ համայնքների ղեկավարների գործունեությանը տրվել է գնահատական և կոնկրետ ցուցումներ ու հանձնարարականներ թերությունների վերացման համար: 5 համայնքների ղեկավարներ ենթարկվել են վարչական տույժի:

Առանձին դեպքերում համայնքների ղեկավարների նկատմամբ կիրառվել են ներգործության միջոցներ՝ նախազգուշացվել են և տրվել են ցուցումներ հայտնաբերված խախտումները վերացնելու համար:

Համապատասխան աշխատանքներ են տարվել համայնքների վարչական սահմաններում գտնվող հողատարածքների վարձակալության տրամադրման մրցույթները, հողերի օտարման ու աճուրդ-վաճառքի գործընթացը սահմանված կարգին համապատասխանեցնելու, վարձակալության պայմանագրերի կնքման և պետական գրանցման ապահովման ուղղությամբ: Մարզի 10 համայնքներում /Օռվակ, Արտանիշ, Վարսեր, Գեղհովիտ, Չորագյուղ, ք.Վարդենիս, ք. Ճամբարակ, Բերդկունք, Գեղամավան, Ջիլ, / կասեցվել են սահմանված կարգի խախտումներով հայտարարված մրցույթներն ու աճուրդ-վաճառքները: Խորհրդատվական օգնություն է ցուցաբերվել համայնքներին հայտարարությունների ճիշտ ձևակերպման, մրցույթների և աճուրդ-վաճառքների կազմակերպման և անցկացման հարցերում:

Հանրապետական գործադիր մարմինների հետ ապահովվել է անհրաժեշտ համագործակցություն համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողերը համայնքների վարչական սահմաններում ընդգրկելու ծրագրի իրականացման աշխատանքներում: Այդ ուղղությամբ մեր կողմից արվել են 18 առաջարկություններ, որոնք հիմնականում հաշվի են առնվել: Ընդ որում բոլոր առաջարկները բխում էին ՀՀ կառավարության 27.10.2005թ. թիվ 1873-Ն որոշման պահանջներից:

Համայնքներից ստացված նյութերի հիման վրա ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ համատեղ ճշտվել և տեղեկություններ են ներկայացվել մարզի համայնքներում սեփականաշնորհված գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման շրջանակներում քաղաքացիներին տրամադրված սեփականության իրավունքի գրանցման վկայականներում նշված հողամասերի մակերեսի չափի և սեփականության իրավունքով փաստացի օգտագործվող հողամասերի մակերեսի՝ չափի տարբերությունները /48 համայնքներում իրականացվել են ճշգրտման աշխատանքներ/:

Քննարկվել և ՀՀ կառավարության հաստատման են ներկայացվել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների փոփոխության 8 առաջարկներ, որոնցից 6-ը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: /Լճավան, Աստղաձոր, ք.Մարտունի, Ծակքար, ք.Գավառ, Լճաշեն/: 2-ը գտնվում են քննարկման փուլում / Մաքենիս համայնք և համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողերի մեկ հատվածի՝ Սոթք/

Ամփոփվել է 2010թ. ընթացքում համայնքներում իրականացված հողերի աճուրդ-վաճառքների վերաբերյալ տվյալները և տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն /28 համայնքում օտարվել է 293 միավոր՝ 121.5 հա հողատարածք, համայնքների բյուջե է մուտքագրվել 124.0 մլն դրամ:

Համայնքների ղեկավարներին մեթոդական օգնություն է ցուցաբերվել 2010թ.-ի հողային հաշվեկշիռների կազմման գործընթացում: Սահմանված կարգով ճշտվել, կազմվել, ամփոփվել և կադաստրի պետական կոմիտե է ներկայացվել մարզի հողային հաշվեկշիռը ըստ նպատակային նշանակության հողատեսքերի, գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների /համայնքների հողային հաշվեկշիռներում իրականացվել է շուրջ 138 ուղղումներ և փոփոխություններ/:

2010թ.-ին դատարաններում քննվել է մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 12 վարձակալների գործեր 1.5 մլն դրամ ապառքը գանձելու համար:

## **ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Համայնքների ղեկավարների քաղաքաշինական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման ուղղությամբ մշակվել և հաստատվել է մարզի համայնքներում պլանային ստուգումներ կատարելու ժամանակացույցը: Ըստ ժամանակացույցի մարզի 91 համայնքներից 88-ում կատարվել են պլանային ստուգումներ, որոնց վերաբերյալ սահմանված կարգով կազմվել են արձանագրություններ, ընդունվել մարզպետի որոշումներ: Տեղ գտած խախտումների և թերությունների վերացման համար տրվել են համապատասխան ցուցումներ:

Կազմակերպվել է Աղբերք համայնքի գլխավոր հատակագծի մշակման աշխատանքները, որոնք արդեն ավարտվել և հաստատման փուլում են: "Սևան" ազգային պարկին սահմանակից 24 համայնքների համար կազմվել են համայնքների գլխավոր հատակագծերի մշակման նախագծային

առաջադրանքների նախագծեր, որոնք ներկայացվել են լիազոր մարմին և համաձայնեցվել են միջգերատեսչական հանձնաժողովի հետ: Դրանցից 17-ի համար սահմանված կարգով կազմակերպվել են նախագծման մրցույթները և աշխատանքները ներկայումս նախագծման փուլում են: Երկու համայնքների գլխավոր հատակագծերի մշակումը գտնվում է մրցույթային փուլում: Սահմանված ժամկետում և սահմանված կարգով ուսումնասիրվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից ներկայացված „Սևանա լճի կենտրոնական գոտու գոտիավորման փաստաթղթերի մշակում,, նախագիծը, որոնց վերաբերյալ արվել են համապատասխան առաջարկություններ :

ՀՀ կառավարության 1998 թ. թիվ 479 որոշմամբ հաստատված կարգի համաձայն համայնքի ղեկավարներից ստացվել են 23 առաջարկություն քաղաքաշինական փաստաթղթերի բացակայության դեպքում հողի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ: Բոլոր առաջարկությունները սահմանված կարգով ուսումնասիրվել և տրվել են համապատասխան ընթացք: Առաջարկություններից 12-ը ստացվել է գյուղական համայնքներից, որոնցից 9-ին մարզպետի կողմից սահմանված կարգով տվել է համաձայնություն, 3-ը՝ վերադարձվել է փաստաթղթերը համալրելու նպատակով: Քաղաքային համայնքների ղեկավարների 11 առաջարկություններից մարզպետարանի կողմից 3-ը մերժվել է քաղաքաքաշինական նորմերին կամ գլխավոր հատակագծերի դրույթներին անհամապատասխանության պատճառով, 5-ը՝ վերադարձվել է սահմանված կարգի պազաբանումներով, 3-ը՝ ներկայացվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության համաձայնեցմանը, որոնցից մեկը մերժվել է, իսկ երկուսին տվել է համաձայնություն:

ՀՀ կառավարության 29.12.2005 թ. թիվ 2404 որոշմամբ հաստատված կարգի համաձայն միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքների կառուցապատումն կանոնակարգելու նպատակով համայնքների ղեկավարներից ստացված 4 և համայնքի վարչական սահմաններից դուրս տարածքներում կառուցապատողներից ստացված 4 առաջարկությունները սահմանված կարգով ուսումնասիրվել և համաձայնեցվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ:

2010թ. ընթացքում մարզի համայնքներից մարզպետարան մուտքագրվել է 73 շինարարության թույլտվություններ, /36-ը՝ անհատական բանկելի տների, 21-ը՝ հասարակական սպասարկման օբյեկտների, 16-ը՝ այլ շենքեր շինությունների վերակառուցման և կառուցման/ որոնց համապատասխանությունը գործող օրենսդրությանը և քաղաքաշինական նորմաներին ուսումնասիրվել են:

Համայնքների վարչական սահմաններից դուրս տարածքներում, „Սևան,, ազգային պարկի կենտրոնական գոտում կառուցապատողներին է տրամադրվել 8 ճարտարապետահակագծային առաջադրանք և տրվել է 5 օբյեկտների շինարարության թույլտվություն: Բոլոր ճարտարապետահակագծային առաջադրանքների նախագծերը և ճարտարապետաշինարարական նախագծերը սահմանված կարգով համաձայնեցվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ և ենթարկվել են համալիր քաղաքաշինական և բնապահպանական փորձաքննության: Կանխվել է 1 ինքնակամ շինարարություն, որի կառուցապատողը ենթարկվել է վարչական պատասխանատվության 400 000 դրամի չափով:

ՀՀ 2010թ պետական բյուջեի միջոցների հաշվին մարզում իրականացվել է 858.4 մլն դրամի շինարարական և հիմնանորոգման աշխատանքներ այդ թվում մարզպետարանի պատվիրատվությամբ 197,0 մլն.դրամ, ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ՝ 477,8 մլն.դրամ և ՀՀ կրթության և գիտության նախարարությունների պատվիրատվությամբ՝ 183,6 մլն.դրամ: Շարունակվել են Վաղաշենի միջնակարգ դպրոցի և Լճքի մշակույթի տան շինարարական աշխատանքները, հիմնանորոգվել են 21 կրթական, 2 մշակութային և 2 պետական քոլեջների շենքեր:

Կնքվել են հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողությունների պայմանագրեր:

Պարբերաբար ուսումնասիրվել են կատարվող շինարարական աշխատանքների ընթացքը և որակը:

ՀՀ կառավարության որոշմամբ հատկացված 16854.0 սկսվել է մարզպետարանի նիստերի դահլիճի հիմնանորոգման աշխատանքները:

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցների հաշվին հիմնանորոգվել է Սևանի պոլիկլինիկայի շենքը և ավարտվել է Վանեվան գյուղի խմելու ջրատարի սկզբնամասի նորոգման աշխատանքները:

Կազմվել և ՀՀ քաղաքաշինության նախարարություն է ներկայացվել 2011-2013թթ միջնաժամկետ ծախսային ծրագիրը և 2011թվականի բյուջետային հայտը:

2010թ. որոշակի հաջողություններ է արձանագրվել ճանապարհաշինության բնագավառում: Պետական բյուջեի միջոցներից ներդրված 1.38 մլրդ. դրամի հաշվին մարզում հիմնանորոգվել են տարբեր նշանակության ճանապարհահատվածներ, փլվածքներ Դպրաբակ, Կալավան ճանապարհների վրա կառուցվել է մեկ հատ 42 մետր թռիչքով կամուրջ, ինչպես նաև կատարվել են պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության աշխատանքներ:

Բացի պետական բյուջեից մարզում ճանապարհաշինության բնագավառում խոշոր ներդրումներ են կատարվել նաև տարբեր վարկային ծրագրերով:

<<Ասիական զարգացման բանկի>> ֆինանսավորմամբ 2010թ. զարնանը վերսկսվեց և ավարտվեց Վարդենիսի տարածաշրջանի թվով 4 տարբեր նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքները, որի արդյունքում ներդրվեց ավելի քան 1.9 մլրդ. դրամ:

<<Համաշխարհային բանկի>> ֆինանսավորմամբ 2010թ. հիմնանորոգվել են 11.5կմ տարբեր նշանակության ավտոճանապարհներ, որի արդյունքում ներդրվել է 1.08մլրդ.դրամ: Այս ծրագրով նախատեսված թվով 4 ճանապարհների հիմնանորոգումը ամբողջությամբ ավարտվել են, իսկ Գեղամավան-Գագարին ավտոճանապարհի հիմնանորոգումը նախատեսվում է ավարտել 2011թ. ընթացքում:

Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրով հիմնանորոգվել է Ճամբարակ քաղաքի Գ. Նժդեհի փողոցի շուրջ 1.2կմ հատվածը, իսկ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության միջոցով Թթուջուր համայնքում հիմնանորոգվել է 1 հատ համայնքային նշանակության կամուրջ:

Ընդհանուր առմամբ 2010թ. մարզում ճանապարհների հիմնանորոգման և սպասարկման նպատակով ներդրվել է ավելի քան 4,5 մլրդ. դրամ, որի արդյունքում հիմնանորոգվել են 26.1կմ ճանապարհներ, 2 փլվածքներ և 1 կամուրջ, կառուցվել է ևս 1 նոր կամուրջ, ինչպես նաև կատարվել են պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների սպասարկման աշխատանքներ:

Իրականացվել են մարզային ենթակայությամբ գործող 123 ՊՈԱԿ-ներին ամրացված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքները: Անվանափոխության հետ կապված 3 ՊՈԱԿ-ներում իրականացվել են գույքի նկատմամբ օգտագործման իրավունքների պետական գրանցման աշխատանքներ /Ն. Գետաշենի թիվ 1 միջն. դպրոց, Ձորագյուղի հիմնական դպրոց, Գավառի թիվ 4 միջն. դպրոց ՊՈԱԿ-ներ/:

Մարզային ենթակայության մի շարք ՊՈԱԿ-ներում ամրացված անշարժ գույքը սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման վկայականներում արտացոլված է որպես սեփականություն` անհատույց օգտագործման իրավունքով արտացոլվելու փոխարեն: Այս ուղղությամբ ևս իրականացվում են պարզաբանման և շտկման աշխատանքներ: 3 ՊՈԱԿ-ների սեփականության /օգտ./ իրավունքի վկայականներում կատարվել են շտկումներ:

ՀՀ կառավարության որոշումներով մարզային ենթակայության 5 ՊՈԱԿ-ների /ավագ դպրոցների/ լիազորությունը հանձնվել է ՀՀ կրթության և գիտության նախարարությանը:

Ընթացքի մեջ է մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներին ամրացված գույքը ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը հանձնելու գործընթացը:

Մարզային ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ների կողմից իրենց ամրացված անշարժ գույքի վարձակալության գործընթացն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ կառավարության 22.02.2001թ. թիվ 125 և 09.11.2009թ. թիվ 731 որոշումներով հաստատված կարգով՝ մարզպետի համապատասխան որոշումներով: 2010թ.-ին մարզային ենթակայության ՊՈԱԿ-ներին ամրացված անշարժ գույքի վարձակալության թույլտվության որոշումներ չեն տրվել:

Մարզպետարանի ենթակայության բոլոր 39 առևտրային կազմակերպություններին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի նկատմամբ կատարվել է իրավունքների պետական գրանցում:

Աջակցել և վերահսկել ենք մարզի թվով 71 համայնքների խմելու ջրի ինքնուրույն մատակարարման գործընթացը, համակարգել առկա հիմնախնդիրները՝ ընդգրկելով դրանք մարզի զարգացմանն ուղղված տարբեր ծրագրերում: Նման ծրագրերով մարզի 16 համայնքներում իրականացվել է ջրագծերի շինարարություն մոտ 31.5 կմ և ջրատարների նորոգման 10.7 կմ, ընդամենը՝ 175.8 մլն դրամի, աշխատանքներ:

Կազմակերպել և վերահսկել ենք մարզի համայնքների սանիտարական մաքրման, աղբահանության և բարեկարգման գործընթացները, ընթացքի մեջ են Գավառ, Մարտունի, Վարդենիս, Սևան քաղաքների կոյուղացանցերի և կոյուղու մաքրման կայանների կառուցման գործընթացները: Այս նպատակով 2010թ.-ին իրականացվել է կոյուղու ցանցի կառուցման 2067.7 մլն դրամի և մաքրման կայանների նախագծման 216.5 մլն դրամի աշխատանքներ:

Համայնքների գազիֆիկացմանն ուղղված «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից 64,6 մլն դրամ ներդրումով մարզի տարածքում կառուցվել և նորոգվել է շուրջ 4500գ.մ. գազատար: Գազից օգտվող բաժանորդների թիվն աճել է 1,85%-ով: Մարզում գրանցվել է 43605 բաժանորդ, որից 42940-ը բնակիչ բաժանորդներ են:

Աջակցություն է ցուցաբերվում «Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից Սևանա լճի ավազանում աղբավայրերի տեղաբաշխման ուրվագծի մշակման աշխատանքներին:

Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների շահագործման ոլորտում աշխատանքները կատարվել են «ՀՀ հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքի և ՀՀ կառավարության 2008թ. սեպտեմբերի 4-ի թիվ 6 արձանագրային որոշման դրույթներին համապատասխան:

## **ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

ՀՀ Գեղարքունիքի մարզում 2010 թվականին կրթության բնագավառում աշխատանքներն իրականացվել են Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրությանը համապատասխան, «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2009-2011 թվականների զարգացման ծրագրի», ՀՀ Գեղարքունիքի մարզպետի որոշումների և կարգադրությունների», ՀՀ կրթության և գիտության նախարարության հրահանգների ու հանձնարարականների համաձայն:

2010թ. մարզի զարգացման ծրագրով կրթության բնագավառում գերակա նպատակ են դիտվել կրթության որակի և մատչելիության բարձրացումը, միջնակարգ կրթության համակարգում բարեփոխումների իրականացումը, կառավարման մեխանիզմների կատարելագործման ու թափանցիկության ապահովումը, ուսումնական գործընթացը տեղեկատվական

տեխնոլոգիաներով հագեցումը, դպրոցների շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավումը, հատուկ կրթական և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական համակարգում ինտեգրման միջոցառումների իրականացումը, նախադպրոցական կրթության մատչելիության ապահովումը:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզում գործել են մարզային ենթակայության 128 կրթական հաստատություններ, այդ թվում՝ հանրակրթական դպրոցներ -126 (որից՝ միջնակարգ -103, հիմնական -15, տարրական -2, ավագ (այդ թվում կրթահամալիրը) -6), հատուկ դպրոց (Գավառում)-1, արհեստագործական ուսումնարան (Սևանում) -1:

Ավագ դպրոցների ստեղծման համակարգի ռազմավարական ծրագրի շրջանակներում մեր կողմից առաջարկություն է ներկայացվել ՀՀ ԿԳՆ՝ Մարտունի քաղաքի N 2 միջնակարգ դպրոցը ևս վերակազմակերպելու ավագ դպրոցի:

2010-2011 ուսումնական տարում մարզի դպրոցներում փաստացի կոմպլեկտավորվել է 1501,5 դասարան 29080 աշակերտով (2624 աշակերտ կոմպլեկտավորվել է ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ գործող ավագ դպրոցներում), Գավառի N 1 հատուկ դպրոցում՝ 8 դասարան 76 աշակերտով, Սևանի արհեստագործական ուսումնարանում՝ 7 խումբ 108 սովորողով: 1-ին դասարան են ընդունվել 2938 աշակերտներ: 2009-2010 ուսումնական տարվա համեմատությամբ աշակերտների թիվը պակասել է 2061 աշակերտով (որոնցից 503-ը մեկնել է արտերկիր, այլ ուսումնական հաստատություններ՝ 441-ը, ավագ դպրոցում կրթությունը չեն շարունակել 144-ը), իսկ նախորդ տարվա համեմատությամբ առաջին դասարան ընդունվող երեխաների թիվը պակասել է 973-ով:

Հանրակրթությունից դուրս են մնացել ընդամենը 3 երեխա՝ առողջության և հատուկ կրթության պահանջ ունենալու պատճառով (Թթուջուր, Այգուտ և Մաքենիս համայնքներից), որոնց տնային պայմաններում կրթություն ստանալու համար տարվել է համապատասխան աշխատանք:

Դպրոցահասակ երեխաների հաշվառումը կազմակերպելու և ուսումնական հաստատություններ նրանց ընդգրկումն ապահովելու նպատակով համայնքներից ստացվել և ամփոփվել է համապատասխան տեղեկատվությունը, ըստ որի մարզում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեն 86 երեխա, որոնցից բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի մասնագետների կողմից վկայագրվեցին 24-ը:

Ապահովվել է անհրաժեշտ պայմաններ հատուկ կրթության կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար: Գավառի N 1 հատուկ դպրոցում ընդգրկված 76 աշակերտների ուսման, սննդի և գիշերելու խնդիրները որոշակիորեն բարելավվել են, իսկ Գավառի N 1 հիմնական դպրոցում ներառական կրթության շրջանակներում հաճախում են 17 երեխաներ, որոնց համար ևս ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ (երթնեկության, սննդի ծախսերի տրամադրման և համապատասխան կադրերով ապահովում): Աշխատանքներ են տարվում ներառական կրթություն իրականացնելու նաև Ճամբարակի և մարզի մյուս տարածաշրջանների մեկական դպրոցներում:

Որոշակի աշխատանք է կատարվել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դպրոց ընդգրկելու ուղղությամբ, որի արդյունքում շուրջ 320 երեխաներ ապահովվել են հագուստով և գրենական պիտույքներով, և դպրոցահասակ բոլոր երեխաները հաճախել են դպրոց (բացառությամբ 1-ին դասարան հաճախելու տարիք ունեցող այն երեխաների, որոնց ֆիզիկական տվյալների պատճառով ծնողները հրաժարվել են դպրոց ուղարկելուց):

Համապատասխան կանոնադրությունների պահանջների համաձայն կազմակերպվել են դպրոցականների առարկայական և շախմատի օլիմպիադաները: Առարկայական օլիմպիադաների ներդպրոցական տարածքային և մարզային փուլերին մասնակցել են 8340 աշակերտներ, իսկ շախմատի օլիմպիադայի տարբեր փուլերին մասնակցել են ընդհանուր առմամբ 3655 աշակերտներ:



Կազմակերպվել են ԱԺ գավաթի խաղարկության, շարադրությունների մրցույթներ, նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղերը, ՀՀ անկախության 18-րդ տարեդարձին նվիրված մարզային խաղերը, նկարչական ցուցահանդեսներ, երաժշտական փառատոներ, տոնական ցերեկույթներ և հանդիսություններ՝ նվիրված հոբելյանական տարելիցներին, ազգային մեծություններին, տոներին ու ծեսերին, որոնք նպատակաուղղվել են սովորողների մեջ հայրենասիրության արմատավորմանն ու խորացմանը, ուսման որակի և արդյունավետության բարձրացմանը: Մարզի բոլոր ուսումնական հաստատություններում և համայնքներում առանձին հանդիսությամբ են կազմակերպվել Հայրենական մեծ պատերազմի 65-ամյակին, ՀՀ Սահմանադրության 15-ամյակին նվիրված տոնակատարությունները, իսկ հանրակրթական դպրոցներում՝ ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնած «Մեր մեծերը» խորագրով անվանի հայորդիներին նվիրված միջոցառումները:

ԱԺ գավաթի խաղարկության, նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղերի եզրափակիչում մարզի հավաքականները (Կարճաղբյուրի մ/դ, գրավել են 2-րդ տեղ/, Սահմանադրության 15-ամյակին նվիրված շարադրությունների մրցույթում հաղթող է ճանաչվել Սևանի N 7 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Արփինե Ղազարյանը, մարզի ներկայացուցիչները հաջողությամբ են հանդես եկել նաև մարզամշակութային բազմաթիվ այլ մրցումներում ու փառատոներում:

2010թ. մարզի հանրակրթական հաստատություններում աշխատել են 3616 մանկավարժներ, որոնցից բարձրագույն մանկավարժական կրթությամբ՝ 2564-ը, բարձրագույն ոչ մանկավարժական կրթությամբ՝ 250-ը, միջին մասնագիտական կրթությամբ՝ 655-ը, միջին մասնագիտական ոչ մանկավարժական կրթությամբ՝ 93-ը, ընդհանուր միջնակարգ կրթությամբ՝ 54-ը, կենսաթոշակառուների թիվը՝ 155 (որից մանկավարժներ՝ շուրջ 30%): Աշակերտ-ուսուցչական դրույք հարաբերակցությունը 11.7/1 է, դասարանների միջին խտությունը՝ 19,4 է, մանկավարժական դրույթների թիվը՝ 2477,8, ուսուցիչների միջին աշխատավարձը կազմել է 138000 դրամ:

Անհրաժեշտ կազմակերպչական և նախապատրաստական աշխատանքներ են կատարվել և «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի կողմից իրականացվել են ուսուցիչների լայնածավալ թեմատիկ վերապատրաստումներ: Հանրակրթական տարբեր առարկաներից, «Առողջ ապրելակերպ», «Քաղաքացի» նախագիծ, բնապահպանական, աղետների կանխարգելման ծրագրերով վերապատրաստվել են շուրջ 1450 ուսուցիչ:

«Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով վերապատրաստման և վերապատրաստող կազմակերպության ընտրության կարգ»-ի համաձայն մարզի հանրակրթական բոլոր հաստատությունների մանկավարժներին իրազեկվել է վերապատրաստման դասընթացների սկսելու մասին, ձևավորվել է վերապատրաստվողների խումբ և Մարտունու N 3 միջնակարգ դպրոցի շենքում ղեկտեմբերի 6-ից կազմակերպվել են դասընթացները:

Որոշակի աշխատանք է տարվել դպրոցները մանկավարժական կադրերով համալրելու ուղղությամբ: ՀՀ ԿԳՆ ներկայացված 2010-2011 ուստարվա մանկավարժական կադրերի պահանջարկի հայտով 16 դպրոցներում կար 22 մասնագետ մանակավարժի պահանջ, որը մրցութային կարգով համալրել հնարավոր չի եղել, գործուղումով ներկայացել և համապատասխան աշխատանքի են անցել 8 ուսուցիչներ, իսկ ընդհանուր առմամբ մարզի դպրոցներում աշխատում են գործուղված 36 ուսուցիչներ: Ուստարվա ընթացքում առաջացած մանակավարժական թափուր տեղերը մրցութային կարգով համալրել են 47 մանակավարժներ:

Համապատասխան կանոնադրություններին համաձայն կազմակերպվել են «Լավագույն ուսուցիչ, տնօրեն, դաստիարակ», Հայոց առաքելական եկեղեցու և ՀՀ ԿԳՆ կողմից համատեղ

իրականացվող՝ 4 առարկաների գծով «Տարվա լավագույն ուսուցիչ», «Հայաստանում ռուսաց լեզվի լավագույն ուսուցիչ», «Նախնական զինվորական պատրաստականության լավագույն ուսուցիչ» մրցույթները և ապահովվել հաղթողների մասնակցությունը մրցույթների հանրապետական փուլերին:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» պահանջները՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 03.05.2010թ. N 124- Ա որոշմամբ դադարեցվել է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության 123 պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմինների մինչ այդ գործող խորհուրդների գործունեությունը և կազմակերպվել ու ավարտվել է մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների նոր խորհուրդների ձևավորման գործընթացը:

ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությանն անցած 6 ավագ դպրոցներում խորհրդների ձևավորման համար ՀՀ ԿԳՆ է ներկայացվել համապատասխան տեղեկատվություն:

Հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրի իրականացման շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատություններում սովորողների ուսման և դաստիարակության աշխատանքների կազմակերպման համատեքստում հետևողականորեն իրականացվել են անչափահասների շրջանում հանցագործությունների կանխարգելմանը նպատակաուղղված բազմաթիվ և տարաբնույթ միջոցառումներ՝ ապահովելով համագործակցություն մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ատորաբաժանումների, համայնքների ղեկավարների, ուսումնական հաստատությունների տնօրենների ու մանկավարժների, ծնողների, իրավապահ մարմինների, երիտասարդական միջոցառումների կազմակերպման մարզային կենտրոնի աշխատանքներում:

Հանրակրթական հաստատություններում սովորողների ուսուցման գործընթացի անխափան կազմակերպման համար հատուկ ուշադրություն է դարձվել դպրոցական շենքերի շահագործմանը և պահպանմանը, պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել է 22 դպրոցական շենք, աշխատանք է տարվել ջեռուցման ապահովման ուղղությամբ, որի արդյունքում հաստատությունները նախընտրած վառելիքով կազմակերպվել են շենքերի ջեռուցումը. 62 դպրոց օգտագործել է գազ (անհատական կաթսայատան միջոցով), 6-ը՝ էլեկտրաէներգիա, 51-ը հեղուկ վառելիքով, իսկ 9-ը՝ խառը:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել դպրոցները համակարգչային տեխնիկայով և տեղեկատվական տեխնոլոգիաներով վերազինելու ուղղությամբ, որի արդյունքում շուրջ 95 դպրոցներ ունեն համակարգչային դասասենյակներ, 120 դպրոցներ ունեն 775 համակարգիչներ և 532 համակարգչային սարքավորումներ, նախորդ տարիներին իներնետ համացանցին միացած 66 դպրոցներին միացել են մարզի մյուս դպրոցները, որը էապես նպաստում է ուսման որակի բարձրացմանը: Ինտերնետ ցանցին միացված չէ միայն Մ. Մասրիկի տարրական դպրոցը, և աշխատանքներ են տարվում այդ դպրոցը համակարգչով և ինտերնետ կապով ապահովելու ուղղությամբ:

Հանրակրթական հաստատությունների գործունեության արդյունավետության բարձրացման գործում կարևորվել է ոչ պետական միջոցների ներգրավումը: Հումանիտար կազմակերպությունների, համայնքների ղեկավարների, դպրոցների տնօրենների, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային մյուս ստորաբաժանումների

համագործակցության արդյունքում ապահովվել է շուրջ 43 միլիոն դրամի արտաբյուջետային միջոցների ներգրավում, որով իրականացվել են դպրոցների վերանորոգման և գույքավորման աշխատանքներ:

Աշխատանքներ են տարվում նախադպրոցական ուսումնական հաստատություններ երեխաների ընդգրկվածության և մատչելիության ուղղությամբ:

Մարզի 92 համայնքներից 29-ում կան մանակապարտեզներ: Գործող 47 մանակապարտեզներից 22-ը գործում է շուրջտարի, իսկ 25-ը՝ սեզոնային, համայնքների ղեկավարների հետ համագործակցության արդյունքում 2010-2011 ուստարվա 1-ին կիսամյակում արդեն գործում են 37-ը, իսկ Սարուխանի N 1, 2, Գանձակի, Վահանի և մի շարք այլ համայնքների մանակապարտեզների շենքերը հումանիտար կազմակերպությունների («Վորլդ Վիժըն», «Շեն» և այլն), համայնքապետարանների (Վարդենիս, Գավառ, Զովաբեր, Մ. Մասրիկ և այլն) միջոցներից կատարված ներդրումների հաշվին վերանորոգվել կամ գույքավորվել են և կգործեն 2011թ. ընթացքում:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2010թ. մայիսի 20-ի N 40-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է մարզի համայնքներում գործող նախադպրոցական հաստատությունների գործունեությունը: Ուսումնասիրված 10 մանակապարտեզներում առկա են շենքային պայմանների բարելավման, փափուկ և կոշտ գույքի, սարքավորումներով, դիդակտիկ նյութերով, խաղալիքներով, բակային խաղամիջոցներով ապահովման, մանկավարժների վեարապատրաստման և ատեստավորման անհրաժեշտություն: Ուսումնասիրությունների ընթացքում արձանագրված թերությունները, նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենսդրության պահանջներից շեղումները տեղում քննարկվել են մանակապարտեզների տնօրինության և համայնքների ղեկավարների հետ, տրվել հանձնարարականներ, ցուցաբերել համապատասխան մեթոդական օգնություն:

Իրականացվել են աշխատանքներ մարզի դպրոցները 2010-2011 ուսումնական տարվա համար նախատեսված դասագրքերով, ուսումնամեթոդական ձեռնարկներով ապահովելու ուղղությամբ: ՀՀ ԿԳՆ և համապատասխան հրատարակչությունների միջև կնքված պայմանագրերի համաձայն մարզկենտրոն է ներկրվել և ըստ ներկայացրած հայտերի դպրոցներին է բաշխվել 79 անուն 145841 հատ 1-11-րդ դասարաններին դասագրքեր, 12 անուն 1616 հատ ուսուցիչների ձեռնարկներ, 83 անուն 13063 հատ ուսումնասօժանդակ գրականություն (տեղեկագրեր, պաստառներ, քարտեզներ, թելադրությունների և փոխադրությունների ժողովածուներ, մանկավարժական պարբերականներ):

## **ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Հաշվետու ժամանակաշրջանում մարզում գործել են 87 մշակույթի տներ և բացել ակումբներ, 103 գրադարաններ, 3 թանգարան, 1 թատրոն, 2 պատկերասրահ, 8 երաժշտական, 5 արվեստի և 4 գեղարվեստի դպրոցներ/այդ թվում 4-ը՝ հանրապետական, 2-ը՝ մարզային, 204-ը համայնքային ենթակայության են/, որոնց գործունեությունը նպատակաուղղված է մարզում արվեստի և մշակութային ժամանակակից ենթակառուցվածքների զարգացմանը և մշակութային գործընթացների խթանմանը, ժողովրդական արվեստների և արհեստների պահպանմանն ու տարածմանը, տարաբնույթ՝ երգի, պարի, կիրառական արվեստի, ասմունքի, կերպարվեստի, քանդակագործության և այլ խմբակների գործունեությանը:

Կազմակերպվել և անցկացվել են բազմաթիվ միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին, այդ թվում Հայոց բանակի ստեղծման տարելիցին, մայրենի լեզվի օրվան, կանանց միջազգային օրվան և մայրության ու գեղեցկության օրվան /միջոցառումներին մասնակից դարձնելով վետերան կանանց և Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների այրիներին/,

Շուշիի ազատագրման, հաթանակի և խաղաղության օրվան, Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 65-րդ տարեդարձի կապակցությամբ մարզի քաղաքային համայնքներում անցկացվեցին շքերթ-երթեր զինվորների մասնակցությամբ, երեխաների իրավունքների պաշտպանության օրվան, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 15-ամյակին, անկախության օրվան, ուսանողության և երիտասարդության օրվան, գրադարանավարի օրվան, տարեցների միջազգային օրվան: Մարզում նշվել է նաև Հայոց Մեծ եղեռնի և 1988թ. երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակի օրերը:

Աշխատանքներ են տարվել հայ մշակույթի և արվեստի, հասարակական-քաղաքական գործիչների հոբելյանների կազմակերպման և անցկացման գործում: Կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ՝ նվիրված մեծանուն հայորդիներ Վարդգես Սուրենյանցին, Միսաք Մանուշյանին, Պողոս Նուբարին, Մխիթար Սեբաստացուն, Լազարյաններին: Անցկացվել են գրական-երաժշտական ցերեկույթներ, քննարկումներ, ասմունքի ժամեր՝ նվիրված Վահան Տերյանի ծննդյան 125-ամյակին, Րաֆֆու ծննդյան 175-ամյակին, պատմահայր Մովսես Խորենացու ծննդյան 1600-ամյակին:

Մարզի տարածքում ավանդական տոների, ծեսերի, ուխտագնացությունների կազմակերպման գործում մարզպետարանը համագործակցել է մարզի մշակութային կազմակերպությունների, Գեղարքունյաց թեմի և հասարակական կազմակերպությունների հետ:

Մարզի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման ուղղությամբ մարզպետարանը համագործակցել է պատմական միջավայրի պահպանության Գեղարքունիքի մարզային ծառայության հետ: Աշխատանքներ են տարվել դրանց հաշվառման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգման և օգտագործման հարցերի շուրջ:

Համագործակցված աշխատանքներ են տարվել տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ, հաշվի առնելով հուշարձանների՝ որպես անշարժ գույքի հատուկ տեսակի նկատմամբ տնօրինման և օգտագործման առանձնահատկությունները: Շարունակվում են մարզի վարչական տարածքում գտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանական գոտիների նախագծման և հաստատման աշխատանքները:

Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 65-ամյակին ընդառաջ՝ աշխատանքներ են տարվել համայնքներում Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հուշարձանների վերականգման, վերանորոգման, ինչպես նաև տարածքների բարեկարգման ուղղությամբ:

Աշխատանքներ են տարվել մարզում գործող 8 երաժշտական և 4 արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների դասարաններում պետական փոխհատուցմամբ 204 աշակերտների սովորելու հարցում: Գեղագիտական դաստիարակության և գեղարվեստական կրթության որակի բարձրացման նպատակով «Մշակութային կրթության աջակցություն» հիմնադրամի հետ համատեղ կազմակերպվել են վարպետաց դասեր հանրապետության լավագույն մասնագետների ուժերով: Հրավիրվել են քննարկումներ և խորհրդակցություններ դպրոցներում առկա ընթացիկ հարցերի և խնդիրների պարզաբանման և վերլուծության նպատակով: «Մշակութային կրթության աջակցություն» հիմնադրամի կողմից դպրոցներին տրամադրվել է գրականություն, սակայն դեռևս կարիք կա մասնագիտական գրականության, նոտաների:

Մարզում գործում են 9 մարզադպրոց՝ որից 2-ը հանրապետական, 1-ը մարզային և 6-ը համայնքային ենթակայության և 3 մարզադաշտ: Մարզային և համայնքային ենթակայության մարզադպրոցներում գործում են 17 մարզաձևեր՝ 133 խմբերով, որտեղ ընդգրկված են 1739 մարզիկներ: Մարզի հավաքական թիմերը և մարզիկները մասնակցել են հանրապետական և

միջազգային մրցումների: Կազմակերպվել և անցկացվել են շախմատի պատանիների և մեծահասակների, վոլեյբոլի մեծահասակների, բռնցքամարտի կրտսեր և միջին տարիքի պատանիների, ֆուտզալի մարզային առաջնություններ: Մարզի համայնքներում

ձմեռային մարզաձևերի և ազգային խաղերի մասսայականացման, ինչպես նաև ազգաբնակչության առօրյայում առողջ ապրելակերպի արմատավորման նպատակով անցկացվել են «Գեղարքունյաց ձմեռ – 2010» մարզամշակութային միջոցառումներ:

ՀՀ Անկախության 19-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 19-րդ մարզական խաղերի շրջանակում վոլեյբոլի տղաների թիմը եզրափակիչ փուլում գրավեց չորրորդ տեղը, ձեռքի գնդակի հավաքական թիմը՝ երկրորդ տեղը, ֆուտբոլի «Ալաշկերտ» թիմը՝ երկրորդ տեղը: ՀՀ Գեղարքունիքի մարզային ենթակայության հանրակրթական դպրոցների 9-11-րդ դասարանների աշակերտների շրջանում անցկացված նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի մարզային փուլում հաղթած Կարճաղբյուրի միջնակարգ դպրոցի թիմը եզրափակիչ փուլում գրավեց երկրորդ տեղը:

Մասնակցություն է ցուցաբերվել ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթին, «Բանակ-18» ռազմամարզական Երևան-Շուշի համահայկական մրցույթ-արշավին:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 09.07.2010թ. N300-Ա որոշմամբ հաստատվել և գործողության մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2010-2015 թվականների ծրագիրը

## **ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Մարզում 39 առողջապահական ընկերությունները ներկայացված են փակ բաժնետիրական ընկերությունների ձևով, որից՝ երկու բժշկական կենտրոն, 4 պոլիկլինիկա, երկու հիվանդանոց, մեկ ծննդատուն, երկու առողջության կյենտրոն, 28 ամբուլատորիաներ և առողջության առաջնային պահպանման կենտրոններ:

Մարզային առաջնային բժշկական օգնության անձնակազմը անցել է ընտանեկան բժշկության և բուժքույրերի վերապատրաստման դասընթացներ:

ՀՀ կառավարության 2008թ. հունիսի 19-ի թիվ 24 արձանագրության որոշման և ՀՀ առողջապահության նախարարի 2008թ. նոյեմբերի 18-ի թիվ 1661-Ա հրամանի, մարզում շարունակվում է առողջության առաջնային պահպանման որակի բարելավմանն ուղղված աշխատանքները: Որակի վերահսկման համար մարզում նշանակվել են համապատասխան մասնագետներ, որոնք վերահսկողություն են իրականացրել մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական այն ընկերություններում, որոնցում աշխատում են երեք և ավել ընտանեկան բժիշկներ:

ՀՀ ԱՆ առողջապահական ԾԻԳ - ի միջոցով ընտանեկան բժշկության գծով 2010թ. վերապատրաստվել և ընտանեկան բժշկի որակավորում են ստացել մարզի առաջնային բուժօգնության 3 բժիշկներ և 12 բուժքույրեր:

ՆՕՎԱ ծրագրի շրջանակներում վերապատրաստվել և անհրաժեշտ գրականությունով են ապահովվել ծննդօգնության, նախաձննդյան և հետձննդյան խնամք իրականացնող բուժ. անձնակազմերը:

2010թ. գլոբալ բյուջեն եղել է 1 մլրդ.878886 դրամ:

Մարզի բոլոր առողջապահական ընկերությունները 2010թ. ընթացքում ապահովել են իրենց վրա դրված պետական պատվերի առաջադրանքները, ընկերությունների կողմից ներկայացրված

կատարողականները ֆինանսավորվել են 100 % -ով: Ջորակոչային և նախագորակոչային աշխատանքները մարզում ապահովել են 5 տարածաշրջանների բժշկական հանձնաժողովների միջոցով, որոնք ապահոված են եղել բժշկական կադրերով և համապատասխան բուժ. սարքավորումներով:

Ծննդոգնության հավաստագրերի ներդրումից հետո բարձրացել է հղիների ընդգրկվածությունը և որակյալ ծննդոգնության իրականացումը: Վերջին 5 տարում մարզում չեն արձանագրվել մայրական մահացության դեպքեր: 2010թ. մարզում ծնվել է 3008 երեխա, որը 2009թ. համեմատությամբ պակաս է 78 երեխայով /3086 երեխա/:

ՆՕՎԱ ծրագրի շրջանակում Մարտունու ծննդատանը վերանորոգվել և համապատասխան կահավորանք է ստացել <<Մայրական դպրոց>> սենյակը, որը իրականացնում է հղիների կրթական ծրագիր: Մարզպետի կողմից պետական պատվերի միջնորդագիր է տրվել 122 մարդու:

Վերականգնողական և առողջարանային բուժման ուղեգրեր է հատկացվել շուրջ 180 հաշմանդամի: Մարզում բարձր ցուցանիշ է ապահովել հավաքագրման գործընթացում /շուրջ 94 %/: 2010թ. տվյալներով մարզի առողջապահական ընկերություններից միայն Մարտունու բժշկական կենտրոնը ունի շուրջ 22.5 մլն. դրամի պարտք, կազմվել է պարտքի մարման ժամանակացույց, որը մինչև 2011թ. սեպտեմբեր ամիսը ամբողջովին կմարվի: Մնացած ընկերություններում ֆինանսական իրավիճակը կառավարելի է:

2010թ. վերանորոգվել է Սարուխանի բժշկական ամբուլատորիան՝ /73.0 մլն. դրամ/: Աստղաձորի ամբուլատորիան տեղափոխվել է համաշխարհային բանկի վարկային ծրագրով կառուցված նոր շենք՝ /53.0 մլն դրամ/: Այսօրվա դրությամբ մարզի Ծակքարի, Լիճքի, Վարդաձորի, Ակունքի և Լճափի ԱԱՊԿ-ները չունեն շենքային հարմարավետ պայմաններ:

Վերանորոգման գործընթացը շարունակվում է Գավառի բժշկական կենտրոնում՝ /725 մլն. դրամ չափով/, Սևանի պոլիկլինիկայում՝ /շուրջ 108.273.000 դրամի չափով/: Վերանորոգման և կրթական ծրագրեր են իրականացվել ՆՕՎԱ ծրագրով 6 ԱԱՊԿ-ում շուրջ 200.000 ԱՄՆ դոլարի չափով: Ֆրանսիական Իգերի նահանգի ֆինանսական միջոցներով շինվերանորոգման աշխատանքներ է արվել Գավառի պոլիկլինիկա ՊՓԲԸ –ում /3.5 մլն. դրամ/, Վարդենիսի հիվանդանոցում՝ 2000 Եվրո, Սևանի հիվանդանոցում՝ 6000 Եվրոյի չափով:

Հիմնանորոգման կարիք ունեն Վարդենիսի հիվանդանոցը, Մարտունու ԲԿ և Ճամբարակի ԱԿ-ի շենքերը:

Սանիտարա-հակահամաճարակային իրավիճակը մարզում 2010թ. եղել է կառավարելի:

2010թ. մարզի 15 լավագույն բժիշկների մասնակցությամբ ԼՂՀ Մարտունու տարածաշրջանում անցկացվել է բաց դռների օր, շրջանի շուրջ 1100 հիվանդներ հետազոտվել և ստացել են համապատասխան բժշկական օգնություն և խորհրդատվություն:

2011թ. ընթացքում ուսումնասիրվել է մարզի ազգաբնակչության սոցիալական վիճակը՝ ի հայտ բերվել խիստ կարիքավոր ընտանիքներ, որոնց նկատմամբ կիրառվել են աջակցության ծրագրեր, աջակցություն է ցուցաբերվել գործազուրկների հաշվառմանը, կազմակերպվել կենսաթոշակատուներին անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում:

Ամփոփվել են մարզի սոցիալական ոլորտի կազմակերպությունների ամենամյա հաշվետվությունները՝ նախատեսված և փաստացի վճարված ընտանեկան նպաստի, միանվագ դրամական օգնությունների, կենսաթոշակատուների վերաբերյալ և ներկայացվել ՀՀ կառավարություն:

Մարզի 240.165 ազգաբնակչության շուրջ 36.094 կենսաթոշակատուներ են / շուրջ 15 %-ը/, որից՝ 14.317 հաշմանդամ կենսաթոշակատուներ, փախստականներ՝ 8.800, աշխատանք փնտրող 7744՝ որից 5783 գործազուրկ, 2500-ը բռնի տեղահանվածներ են:

Մարզի բնակչության սոցիալական վիճակի բարելավման նպատակով պետ. բյուջի միջոցներից շուրջ 68.966.4 մլն. դրամ հատկացվեց վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրի

իրականացման համար, որի հաշվին մարզի համայնքներում իրականացվեց 29 ծրագիր՝ 833 շահառուներով:

2010թ. մարզում ընտանեկան նպաստ են ստացել 13.046 /միջին տարեկան/ ընտանիք, իսկ միանվագ դրամական օգնություն՝ 949 /միջին տարեկան/ ընտանիք:

ՀՀ պետ.բյուջեից մարզի թվով 1649 առաջին դասարան հաճախող երեխաների տրվել է 85.6 հազ. դրամ օգնություն: Մարզի հինգ քաղաքներում գործել են բարեգործական 3 ճաշարան՝ 250 շահառուներով:

2010թ. մարզի 184 Հայրենական մեծ պատերազմի վետերանների փոխհատուցում է տրվել նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀՄԽՀ հանրապետական բանկում մինչև 1993 թ. հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց:

2010թ. հուլիս- օգոստոս ամիսներին պետ.բյուջեի հաշվին մարզի 215 առավել անապահով, զոհված և վիրավոր ազատամարտիկների, ծնողազուրկ և բազմազավակ ընտանիքների երեխաներ անվճար հանգստացել են Հանքավանի մանկական ամառային հանգստյան ճամբարներում:

Մարզի 5783 գործազուրկներից 2010թ. զբաղվածության 5 տարածքային կենտրոնների միջոցով մշտական աշխատանքի են տեղավորվել 656-ը, որից 535-ը մասնավոր ոլորտում, 103-ը պետական կազմակերպություններում, 17-ը՝ հասարակական և կրոնական կառույցներում:

2010թ. ընթացքում ՀՀ կառավարության 09.06.2005թ. թիվ 947-Ն որոշման համաձայն ՀՀ ՊՆ –ից բնակարան ձեռք բերելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն են ստացել մարզի զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ թվով 4 ընտանիքներ:

Գործազուրկների թվաքանակի մեծությունը պայմանավորված է արդյունաբերության ճգնաժամի, ինչպես նաև մարզում մանր ու միջին բիզնեսի զարգացման դանդաղ տեմպով:

Աղքատությունը մարզում դանդաղորեն է կրճատվում ինչպես վերոհիշյալ պատճառներով, այնպես էլ գյուղատնտեսական մթերքների վերամշակման և իրացման շուկաների բացակայությամբ, գյուղատնտեսական աշխատանքների վարման համար անհրաժեշտ տեխնիկայի, գյուղգործիքների, սերմացուների, թունաքիմիկատների, պարարտանյութերի գների աճի, ինչպես նաև ռոռզման ցանցի սահմանափակության հետևանքով: Բնակիչների եկամուտները անհամեմատ ցածր է, որի պատճառով հրաժարվում են հողատարածությունների մշակումից և անասնապահությամբ զբաղվելուց: Այս ամենը նպաստում է բնակչության արտագնա աշխատանքների մեկնելուն:

Աղքատության մակարդակի դանդաղ կրճատման պատճառներից մեկն է նաև կենսաթոշակների, նպաստների և աշխատավարձերի դեռևս ոչ բավարար մակարդակը:

## **ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման շրջանակներում մարզպետը իր իրավասության շրջանակներում իրականացրել է ՏԻՄ-երի հետ աշխատանքի համագործակցման սկզբունքով ՏԻՄ-երի աշխատանքների գործունեության համակարգում:

Վարչական հսկողությունը իրականացվել է <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 77.2 հոդվածի 2-րդ մասի համաձայն հաստատված տարեկան աշխատանքային ծրագրի:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է պետության կողմից համայնքին պատվիրակված և պարտադիր լիազորությունների կատարման ընթացքի վերահսկողություն: Թվով 26 համայնքներում, ուսումնասիրության արդյունքները քննարկվել են մարզպետի նիստում և ընդունվել են համապատասխան որոշումներ, որոնք ներկայացվել են համայնքների քննարկմանը և ձեռնարկվել են անհրաժեշտ մրջոցառումներ, որոնց մասին համայնքների

ղեկավարները գրավոր տեղեկացրել են մեզ, ինչպես նաև հիշյալ տեղեկանքները ուղարկվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

Գեղարքունիքի մարզում 2010թ. ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը ապահովելու, հանրությանը իրազեկելու նպատակով մարզպետարանի և մարզի համայնքների ղեկավարների կողմից կազմակերպվել են համայնքների ղեկավարների և ավագանիների հաշվետվությունների քննարկումներ, որտեղ վեր են հանվել առկա թերություններն ու բացթողումները, ինչպես նաև նշվել են դրանց լուծման ուղիները: Մարզպետը անձամբ մասնակցել է մարզի 5 քաղաքային համայնքների ՏԻՄ-երի հաշվետվությունների քննարկումներին: Մարզպետի կողմից ստեղծվել են հանձնախմբեր, որոնք տարվա ընթացքում ՏԻՄ-երին ցուցաբերել են համակողմանի օժանդակություն համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ: Մարզպետարանի աշխատակիցների օժանդակությամբ մարզի համայնքներում տեղակայվել են տեղեկատվական տախտակներ, որոնցում փակցվում են ՏԻՄ-երի որոշումները:

Մարզի բոլոր համայնքներում կատարվում են համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից քաղաքացիների ընդունելություններ, բարձրացված հարցերի գերակշիռ մասին տրվում են լուծումներ կամ համապատասխան բացատրություններ:

Համայնքներում տեղ գտած հիմնախնդիրները քննարկվել են մարզխորհրդի նիստերում: Յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ կազմակերպվել և անցկացվել են մարզային խորհրդի նիստեր: Նիստերի օրակարգերում ընդգրկվել են տարբեր բնույթի հարցեր, օրակարգը տեղադրվում է մարզպետարանի ինտերնետային կայք էջում:

Նիստի ընթացքն առավել հրապարակային դարձնելու նպատակով հրավիրվում են նաև մարզի առավել ակտիվ գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների և մարզում տեղակայված ՁԼՄ-ների ներկայացուցիչներ:

Մարզի ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ վերահսկողությունը իրականացվել է իրավական մասնագիտական և ֆինանսական ոլորտներում՝ ուսումնասիրվել են համայնքների ղեկավարների սեփական և ավագանիների լիազորությունների իրականացման օրինականությունը, մասնագիտական հսկողության շրջանակներում իրականացվել է համայնքի ղեկավարի կողմից՝ պետության պատվիրակված լիազորությունների իրականացման օրինականությունը, ֆինանսական հսկողություն է իրականացվել համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից իրականացվող բյուջետային և ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ:

Մեթոդական ու խորհրդատվական օգնություն է ցուցաբերվել մարզի բոլոր համայնքներին՝ բյուջեների կազմման, նորմատիվ և այլ իրավական ակտերի ընդունման, հողի հարկի և գույքահարկի բազաների ճշգրտման, ՏԻՄ-երի որոշումների հրապարակայնության ապահովման, համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի /հողեր, շենքեր-շինություններ/ տնօրինման օրինականության պահպանության, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման, համայնքային ծառայության բնագավառում իրականացվող գործընթացներում, համայնքների բյուջեների սեփական եկամուտների ապահովման, <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջների ապահովման հարցերում: Ինչպես վարչական վերահսկողության շրջանակներում, այնպես էլ մարզպետի կարգադրությամբ ստեղծված հանձնարարականները ուսումնասիրվել են մարզի շուրջ 40 համայնքներում գնումների գործի կազմակերպման դրվածքը, արձանագրել թերություններ, ցուցաբերել գործնական օգնություն գործընթացը կանոնակարգելու ուղղությամբ:

2010թ. մարզի 41 համայնքներում հայտարարվել են 94 մրցույթներ, որոնց արդյունքում պաշտոնների են նշանակվել 60 համայնքային ծառայողներ:

34 պաշտոնների մրցույթները չեն կայացել դիմորդներ չլինելու պատճառով:



ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից մարզի 15 համայնքների ղեկավարների աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերում կատարվել են փոփոխություններ:

2010թ. մարզի 11 համայնքներում անցկացվել են ատեստացիաներ, որի արդյունքում ատեստավորվել են 20 համայնքային ծառայողներ:

2010թ. մարզի համայնքներում անցկացրած մրցույթների և ատեստացիաների, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններից ազատված համայնքային ծառայողների վերաբերյալ տեղեկատվությունները ուղարկվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

Մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերի համայնքային ծառայողներից 2010թ. ընթացքում հերթական վերապատրաստում են անցել 163 համայնքային ծառայողներ:

Համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացի նկատմամբ իրականացվել է պատշաճ վերահսկողություն և արդյունքները ժամանակին ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ապահովվել է համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հրապարակայնությունը, պատշաճ կերպով կազմվել և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն է ներկայացվել համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների ժամանակացույցերը, ձեռնարկվել են միջոցներ համայնքներում կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողության շրջանակներում հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ:

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության հետ աշխատանքները իրականացվել են պաշտոնական թղթակցությունների, հանդիպումների միջոցով, անցկացվել են համատեղ խորհրդակցություններ ընթացիկ և հրատապ խնդիրների վերաբերյալ:

Մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման, ծրագրերով կատարվել են զգալի աշխատանքներ, այդ թվում՝  
Գավառագետի 3500 մ հունի մաքրում Գավառ- Կարմիրգյուղ- Մարուխան հատվածում, կատարվել է դրենաժների մաքրում՝ Կարճաղբյուրում՝ 2100մ, Լուսակունք և Խաչաղբյուր համայնքներում՝ 6300մ:

Վտանգի գնահատման նպատակով կատարվել են մարզի տարածքի քարաթափումների, Երանոս և Այգուտ համայնքների սողանքների ուսումնասիրություններ:

Պետական, հանրապետական և մարզային պլաններով և ծրագրերով նախատեսված քաղաքացիական պաշտպանության միջոցառումները կազմակերպվել են.

- Փետրվարի 17-ից ապրիլի 20-ը նախապատրաստվել և ապրիլի 21-ին անցկացվել է հրամանատարաշտապային ուսումնավարժություն <<Խոշոր անտառային հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում>> թեմայով:

Օգոստոսի 5-ից սեպտեմբերի 8-ը նախապատրաստվել և սեպտեմբերի 9-ին անցկացվել է շտաբային ուսումնավարժություն <<Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը խաղաղից ռազմական դրության փոխադրման ժամանակ>> թեմայով:

Մարտի 1-ին անցկացվել են քաղաքացիական պաշտպանության օրվան նվիրված պարապմունքներ, սեմինար և վարժանքներ ուսումնական հաստատություններում: Նոյեմբերի 30-ին մարզպետարանի օպերատիվ խումբը մասնակցել է <<ՔՊ միջոցառումների իրականացումը ռազմական դրության անցման և փրկարարական անհետաձգելի վթարավերականգնողական միջոցառումների իրականացման ժամանակ>> թեմայով ՀՓԾ-ում անցկացված հրամանատարաշտաբային ուսումնավարժությանը:

Մարզի 30 համայնքներում անցկացվել են շտաբային ուսումնավարժություններ արտակարգ

իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության թեմաներով:

Տարվա ընթացքում մարզպետը բազմիցս այցելել է գործատեր, ծանոթացել սահմանային գոտում տեղակայված ստորաբաժանումների զինծառայողների կենցաղին, հնարավորինս ցուցաբերել աջակցություն գործատերի առջև ծառայած տարբեր բնույթի խնդիրների լուծմանը: Վահան գյուղի սահմանամերձ դիրքերում հանդիպման ընթացքում զինծառայողների 18 ընտանիքներին ցուցաբերվել է դրամական օգնություն:

Մարզի տարածքում 2010թ. անցած ժամանակահատվածում անցկացվել են ՏԻՄ 37 ընտրություններ, ապահովվել է հասարակական կարգը և հասարակական անվտանգությունը:

2010թ. ընթացքում Գեղարքունիքի մարզում արձանագրվել է հանցագործության 695 դեպք, նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 710-ի դիմաց: Բացահայտման տոկոսը կազմել է 89.9 % նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 87%-ի դիմաց: Մարզպետի կողմից տրվել են հանձնարարականներ հանցագործությունների կանխարգելման, ինչպես նաև բացահայտման տոկոսի բարձրացման ուղղությամբ:

2010թ. մարզում հաշվառման մեջ են գտնվել 90 անչափահաս երեխաներ:

2010թ. անչափահասների կողմից կատարվել են 42 հանցագործության դեպքեր, նախորդ տարվա 12-ի դիմաց:

Անչափահասների կողմից կատարված հանցագործությունները հիմնականում գողություններ են, որոնք կազմում են 26 դեպք:

Ոստիկանության աշխատակիցների կողմից ամենօրյա կանխարգելիչ աշխատանքներ են տարվում անչափահաս երեխաների շրջանում և նրանց ծնողների հետ:

Ոստիկանության անչափահասների գործերով բաժինների և մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի հետ համատեղ կազմակերպվել են <<Անչափահասը և հանցագործությունը>> թեմայով զրույցներ և քննարկումներ: Կազմակերպվել են համատեղ քննարկումներ համապատասխան համայնքներում, բարձրացվել են մի շարք հարցեր, որոնց ուղղությամբ հանձնարարվել է դպրոցների տնօրեններին կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ, մշակել և իրականացնել ծրագրեր, առավել սերտացնել համագործակցությունը և արդյունավետ աշխատանքներն ոստիկանության անչափահասների բաժինների, համայնքի ավագանու, դպրոցների մանկավարժական կոլեկտիվների հետ: Կազմակերպվել է քննարկում մարզպետի մոտ, որին հրավիրվել են մարզի դատախազը, մարզի ազգային անվտանգության ծառայության ղեկավարը, մարզային ոստիկանության վարչության պետը, մարզպետարանի բաժինների վարիչներ, ուսումնական հաստատությունների տնօրեններ, համայնքի ղեկավարներ:

Ամփոփվել են անչափահասների կողմից կատարված հանցագործությունների և իրավախախտումների կանխարգելման ուղղությամբ կատարված աշխատանքները: Ապահովվել է արդյունավետ համագործակցություն համայնքների ղեկավարության, ոստիկանության, մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի, ուսումնական հաստատությունների տնօրենների միջև, դժվար դաստիարակվող, հանցավոր հակումներ ունեցող անչափահասներին պարզելու, հաշվառելու և նրանց հետ աշխատանքներ տանելու համար:

Կազմակերպվել են հանդիպումներ իրավախախտ անչափահասների և նրանց ծնողների հետ, տրվել է նաև հնարավորինս սոցիալական օգնություն:

Անցկացվել են քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոնները զբաղեցնող 3 մրցույթներ:

Գեղարքունիքի մարզպետարանի 2010թ. աշխատանքային գործունեության հրապարակայնությունը իրականացվել է մարզպետարանի ինտերնետային կայքի, „Միասնական

տեղեկատվական հարթակ,-ի միջոցով: Հանրային իրազեկման նպատակով մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության եվ հասարակայնության հետ կապերի բաժինը լուրջ համագործակցություն է իրականացրել մարզի 3 հեռուստաընկերությունների, մարզային „Գեղամա աշխարհ,, շաբաթաթերթի, Սևան քաղաքի „Սևան,, թերթի, „Արմենպրես,, լրատվական գործակալության, հանրային հեռուստաընկերության „Հայլուր,, լրատվական ծրագրի, մարզի տարածքում եւ հանրապետությունում գործող մի շարք հասարակական կազմակերպությունների հետ: Հաշվետու ժամանակահատվածում մարզպետարանի ինտերնետային կայքում տեղադրվել է Գեղարքունիքի մարզպետարանի տարեկան աշխատանքային ծրագիրը, մարզպետի կողմից ընդունած բոլոր որոշումները և արձակած կարգադրությունները, մարզպետի տարեկան և ընթացիկ հաշվետվությունները, համայնքների ավագանիների որոշումները, թափուր պաշտոնների համար մարզպետարանի կողմից անցկացվող մրցույթների վերաբերյալ հայտարարությունները, մարզխորհրդի նիստերի օրակարգերը, կայացրած որոշումների նախագծերը, մարզպետարան հասցեագրված քաղաքացիների դիմում բողոքների եռամսյակային ամփոփ տվյալները, հրապարակայնության անհրաժեշտության ենթակա այլ նյութեր: Թարմացվել է կայքի „Նորություններ,, բաժինը, որտեղ տեղադրված լրատվական բնույթի նյութերն արտացոլել են մարզպետի աշխատանքային գործունեությանը ինչպես նաև մարզի տարբեր համայնքներում տիրող սոցիալ-տնտեսական իրավիճակը բնութագրող բազմապիսի նյութեր: Ամենօրյա աշխատանք է իրականացվել „Միասնական տեղեկատվական հարթակ,, կայք էջում:

Իրականացվել է ՋԼՄ մոնիտորինգ, անհրաժեշտության դեպքում տեղադրվել է մարզպետի կամ մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների արձագանքը՝ տարբեր ՋԼՄ-ներում մարզպետարանի գործունեությանը վերաբերող հրապարակումների առնչությամբ: Միասնական տեղեկատվական հարթակի «Միջոցառումների անոնս» եւ «Մամլո հաղորդագրություն» բաժնում պարբերաբար տեղադրվել են հայտարարություններ, տեղեկատվական բնույթի նյութեր՝ մարզպետի աշխատանքային գործունեության վերաբերյալ: Մարզպետի գործունեության հրապարակայնության ապահովման նպատակով պատրաստվել է մարզի տարածքում գործող «Քյավառ», «Զանգակ» և «STV-1» հեռուստաընկերությունների միջոցով եթեր են հեռարձակվել տեղեկատվական բնույթի բազմաթիվ հեռուստանյութեր, որոնք անդրադարձել են մարզպետի կողմից մարզի բոլոր տարածքներում կատարած քաղաքացիների ընդունելություններին, մարզպետի աշխատանքային այցերին, տարբեր հիմնախնդիրներին վերաբերող քննարկումներին, ՀՀ եւ օտարերկրյա պատվիրակությունների մարզ կատարած աշխատանքային այցերին, այլ բնույթի աշխատանքներին: Հրապարակման են ենթարկվել մարզպետի ուղերձները՝ նվիրված տոնական եւ հիշարժան օրերին:

Հաշվետու ժամանակահատվածում մարզի հեռուստաընկերությունների միջոցով կազմակերպվել են մարզպետի ուղիղ եթերներ, տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ հարցազրույցներ՝ մարզպետի ինչպես նաև մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ: Մարզպետի մասնակցությամբ հրավիրվել են կլոր սեղաններ, անցկացվել մամլո ասուլիսներ, որոնց հրապարակայնությունն ապահովվել է մարզի ՋԼՄ-ների եւ հասարակական կազմակերպությունների միջոցով: Մարզպետի գործունեության հրապարակայնության ապահովման նպատակով մարզպետարանը ակտիվ համագործակցել է նաև մարզի մի շարք հասարակական կազմակերպությունների հետ: Վերջիններս պարբերաբար հրավիրվել է մասնակցել են մարզային խորհրդի նիստերին, մարզպետարանում տարբեր հիմնախնդիրների առնչությամբ կազմակերպված քննարկումներին այլ հանդիպումների: Մարզում հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների, տարբեր թեմաների շուրջ հանրությանը պարզաբանումներ տալու նպատակով կազմակերպվել են նաև հարցազրույցներ մարզպետի տեղակալների եւ մարզպետարանի աշխատակազմի

կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ: Հանրապետության տպագիր և էլեկտրոնային թերթերը մարզպետի հետ տարվա ընթացքում կազմակերպել են հարցազրույցներ՝ մարզում առկա տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում պարբերաբար լուսաբանվել են նաև ՏԻՄ տարեկան հաշվետվությունները, աշխատանքներ են տարվում համայնքներում տեղեկատվական տախտակների կանոնավոր գործունեության ուղղությամբ: Ընդառաջելով մարզի ուսանողական ակտիվի ցանցությանը, աշխատանքներ են տարվում նաև նրանցից առավել ակտիվների մարզպետարանում կազմակերպվող միջոցառումներին, տարբեր կարգի քննարկումներին մասնակից դարձնելու համար:

2010թ. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանում, ինչպես նաև մարզի Սևանի, Մարտունու, Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջաններում քաղաքացիների ընդունելությունները կազմակերպվել են ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2005թ. մարտի 31-ի „ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանում ընդունելության կազմակերպման կարգի մասին, թիվ 24-Ա և 2009թ. ապրիլի 14-ի թիվ 76-Ա որոշումների պահանջներին համապատասխան: Քաղաքացիների ընդունելության օրերի, ժամերի և վայրի մասին քաղաքացիները իրազեկվել են տեղեկատվական-ընդունարան կենտրոնում տեղակայված ցուցատախտակներից, մարզպետարանի ինտերնետային կայքից, մարզի տարածաշրջաններում փակցված հայտարարություններից:

2010թ. մարզպետի կողմից կազմակերպվել է 430 քաղաքացիների ընդունելություններ, որոնցից 331-ը՝ մարզպետարանում, 40-ը՝ Սևանում, 24-ը՝ Մարտունիում, 25-ը՝ Վարդենիսում, 10-ը՝ Ճամբարակում:

Քաղաքացիների ընդունելություններին մասնակցել են մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը, կառուցվածքային ստորաբաժանումների պետեր, ինչպես նաև համայնքների ղեկավարներ: Քաղաքացիների կողմից բարձրացված հարցերը ժամանակին քննարկվել են և հնարավորինս ՀՀ օրենքով սահմանված կարգով դրանց տրվել են լուծումներ:

2010թ. մարզպետի կողմից ընդունվել են 564 որոշումներ և 70 կարգադրություններ, որոնք սահմանված կարգով և ժամկետներում առաքվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ինչպես նաև տեղակայվել են մարզպետարանի ինտերնետային կայք էջում:

2010թ. մարտ ամսից մարզպետարանում փաստաթղթաշրջանառությունը իրականացվել է էլեկտրոնային համակարգով՝ մարզպետի 2010թ. մայիսի 7-ի թիվ 135-Ն որոշմամբ հաստատված „Աշխատակազմի ներքին գործավարության կարգի,“ համաձայն:

2010թ. քաղաքացիներից ստացվել են 1240 դիմումներ և նամակներ, որոնցից դիմումներ՝ 1120, բողոքներ 120: Վերահսկողության են վերցվել 28-ը: Օգնության համար դիմած 671 քաղաքացիներից 588-ին տրվել է դրամական օգնություն, 321-ը՝ դիմել են առողջապահության, 100-ը՝ բնակարանային, 214-ը՝ աշխատանքի և աշխատավարձի հարցերով և այլն:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ